ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԵԴԻԱՅՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հետազոտության արդյունքների ամփոփում

Դիտարկման ժամանակահատված՝ 2026 թ. ապրիլի 1 - հուլիսի 31

Սույն հետազոտությունն իրականացվել է Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի աջակցությամբ: Հետազոտությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի տեսակետների հետ:

2026
ՀՈԿՏԵՄԲԵՐ

© ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ Ա.
Հետազոտության նպատակը և մշտադիտարկված լրատվամիջոցների և փորձագետների խմբավորման սկզբունքները 4

ՄԱՍ Բ.
Թեմատիկ վեց ուղղությունների ամփոփ վերլուծություն՝ ըստ լրատվամիջոցների և փորձագետների երեք խմբերի 5

ՄԱՍ Գ.
Լրատվամիջոցների դիրքորոշումների թեմատիկ շեշտադրումների փոփոխությունները 2026 թվականի ապրիլ-հուլիս ամիսներին 30

Հետազոտության մեթոդաբանությունը և ստացված ընդհանուր արդյունքները 34

Հավելված 38

ՄԱՍ Ա.
Հետազոտության նպատակը և մշտադիտարկված լրատվամիջոցների և փորձագետների խմբավորման սկզբունքները

Երևանի մամուլի ակումբի՝ Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագրի նպատակն է ուսումնասիրել, թե ինչպես են ընտրված հայաստանյան լրատվամիջոցները և փորձագիտական շրջանակները դիտարկված ժամանակահատվածում ներկայացրել միջազգային դերակատարներին և Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական զարգացումները:

Մշտադիտարկման արդյունքների համախմբման և համեմատության նպատակով լրատվամիջոցներն ու փորձագետները դասակարգվել են ըստ գործող կառավարության քաղաքականության նկատմամբ նրանց նախապես հայտնի կամ հրապարակայնորեն արտահայտված ընդհանուր դիրքավորման՝ կիրառելով նախապես սահմանված չափանիշներ:
Առանձնացվել են երեք պայմանական խմբեր.

- **Պայմանականորեն իշխանամետ ԶԼՄ-ներ և փորձագետներ/ինֆլուենսերներ՝** կառավարության քաղաքականության նկատմամբ ընդհանուր առմամբ աջակցող դիրքավորմամբ:
- **Պայմանականորեն ընդդիմադիր ԶԼՄ-ներ և փորձագետներ/ինֆլուենսերներ՝** կառավարության քաղաքականության նկատմամբ ընդհանուր առմամբ քննադատական դիրքավորմամբ:
- **Պայմանականորեն չեզոք ԶԼՄ-ներ և փորձագետներ/ինֆլուենսերներ՝** իրենց չեզոք դիրքավորող կամ նախնական դասակարգման չափանիշներով հետևողականորեն չաջակցող կամ քննադատական դիրքավորում չունեցող:

Մեթոդաբանական հարցաշարը սահմանում է վեց թեմա՝ 36 հստակեցնող հարցերով: Դրանք վերաբերում են ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի և Վրաստանի դերերին՝ հայ-ադրբեջանական կարգավորման, Հայաստանի անվտանգության, Հայաստան-ԵՄ մերձեցման, տարածաշրջանային անվտանգության և հաղորդակցությունների վերաբացման համատեքստում:

Ամբողջական մեթոդաբանությունը կարող եք գտնել հետազոտության վերջում:

ՄԱՍ Բ.
Թեմատիկ վեց ուղղությունների ամփոփ վերլուծություն՝ ըստ լրատվամիջոցների և փորձագետների երեք խմբերի

1. Պայմանականորեն իշխանամետ լրատվամիջոցների և փորձագետների թեմատիկ վերլուծություն

1.1. ԱՄՆ-ի ընկալումը

Պայմանականորեն իշխանամետ խմբում ԱՄՆ-ի հետ հարաբերությունների խորացմանն աջակցում են բացահայտորեն: Լրատվամիջոցների եթերում և փորձագիտական հրապարակումներում Վաշինգտոնը հանդես է գալիս որպես Հայաստանի խաղաղության օրակարգին նոր կշիռ հաղորդող, արտաքին կախվածությունը նվազեցնելու հնարավորություն ստեղծող գործընկեր: Այս դիրքորոշումը հատկապես հստակ է հայ-ադրբեջանական կարգավորման, TRIPP-ի և Հայաստանի նկատմամբ ԱՄՆ-ի վարած քաղաքականության հարցերում. վերջին երկու ուղղություններով դրական գնահատականները կազմում են համապատասխանաբար մոտ 74% և 73%: Սակայն խմբի խոսույթը չի կարելի անվերապահորեն ամերիկամետ անվանել. Իրանի դեմ ԱՄՆ գործողությունները նույն մարդիկ երբեմն խիստ քննադատում են:

Խաղաղության գործընթաց. Վաշինգտոնի միջնորդությանը նոր նշանակություն են տալիս
ԱՄՆ-ի միջնորդության վերաբերյալ դրական գնահատականները մոտ երկու երրորդն են: Խմբի փորձագետների ու լրատվամիջոցների բանախոսների համոզմամբ՝ 2025 թվականի օգոստոսի 8-ի վաշինգտոնյան պայմանավորվածություններից հետո խաղաղության գործընթացը դուրս է եկել նախկին անորոշությունից: Նրանք պնդում են, որ ամերիկյան ներգրավվածությունը Ադրբեջանի համար բարձրացնում է նոր ռազմական գործողությունների քաղաքական ու տնտեսական գինը: Նրանց համար Վաշինգտոնի առավելությունը միայն միջնորդի հեղինակությունը չէ. ԱՄՆ-ը սեփական շահն ունի խաղաղության, ներդրումների և անխափան հաղորդակցությունների հաստատման հարցում:

Այս մեկնաբանությունն առավել պարզ երևում է Ռուսաստանի նախկին միջնորդության հետ համեմատության ժամանակ: 1in.am-ի քննարկումներում և խմբի մի շարք փորձագիտական հրապարակումներում Ռուսաստանին մեղադրում են հակամարտությունը կառավարելու, սակայն այն հանգուցալուծելու ցանկություն չունենալու մեջ, մինչդեռ Վաշինգտոնին վերագրում են կարգավորմանը նպաստող գործնական շահ: Դրան զուգահեռ կան զգուշավոր ձայներ. ամերիկյան աջակցությունը դեռ ռազմական պաշտպանության պայմանագիր չէ, իսկ խաղաղության իրական ամրությունը կախված է պայմանավորվածությունների կատարումից և Ադրբեջանի վարքից:

TRIPP. «Զանգեզուրի միջանցքի» հակապատկերը
TRIPP-ը խմբի ամենադրական գնահատված թեմաներից է. գնահատականների մոտ երեք քառորդը դրական է, բացասականները՝ ընդամենը շուրջ 4%: Նախագծի կողմնակիցները դրանում տեսնում են Հայաստանի տարածքով ճանապարհների բացման, ամերիկյան ներդրումների և տարածաշրջանում երկրի դերի բարձրացման հնարավորություն: Հատուկ շեշտում են ոչ թե պարզապես նոր երթուղու տնտեսական արժեքը, այլ այն, թե **ով է վերահսկելու այդ երթուղին**:

1in.am-ի հունիսյան քննարկումներում բանախոսները պնդում են, որ Հայաստանի իրավազորության ներքո գործող TRIPP-ը չեղարկում է Ալիևի առաջ քաշած արտատարածքային «Զանգեզուրի միջանցքի» տրամաբանությունը: Իսկ մայիսյան եթերում նախագիծը ներկայացվում է նույնիսկ որպես Հայաստանի պետականության «ԴՆԹ-ն փոխելու» հնարավորություն: Այս բարձրագոչ ձևակերպումները ցույց են տալիս, որ TRIPP-ին վերագրում են ոչ միայն տնտեսական, այլ նաև ինքնիշխանության և անվտանգության նշանակություն: Հետագա բաժիններում կտեսնենք նույն նախագծի վերաբերյալ գրեթե հակադիր՝ որպես սպառնալիք ներկայացնող մեկնաբանությունները:

Այդուհանդերձ, աջակցողները ևս ունեն հարցեր. արդյո՞ք կլինեն խոստացված ներդրումները, ինչպե՞ս կապահովվեն անվտանգությունն ու վերահսկողությունը, և կարո՞ղ է Իրանի դժգոհությունը խոչընդոտել նախագծին: Հետևաբար, դրական գնահատականը դեռ չի նշանակում վստահություն՝ թե գործնական բոլոր հարցերն արդեն լուծված են:

Հայաստանի հետ ռազմավարական գործընկերություն. աջակցություն՝ գործնական արդյունքների ակնկալիքով
ԱՄՆ քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ հիմնականում գովում են ռազմավարական գործընկերության, դիվանագիտական շփումների և պաշտպանական ու տեխնոլոգիական համագործակցության հեռանկարների համար: Շատերը համոզված են, որ Վաշինգտոնի ավելի գործուն ներկայությունը Հայաստանին ազատում է մեկ կենտրոնից կախված լինելու նախկին վիճակից: Արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացումը նրանց համար ինքնանպատակ չէ. այն պետք է ընդլայնի Հայաստանի անվտանգության, ներդրումների և միջազգային բանակցությունների հնարավորությունները:

Սակայն Հ1-ի քննարկումներում հնչող հարցերն ավելի գործնական են. ի՞նչ է տալիս բարձր մակարդակի այցը, ե՞րբ են հայտարարված ծրագրերը վերածվելու ներդրումների կամ անվտանգության շոշափելի արդյունքների: Այսպիսի հարցադրումները չեն փոխում ընդհանուր դրական տրամադրվածությունը, բայց ցույց են տալիս, որ խմբում աջակցության չափանիշ են համարում նաև խոստումների իրագործումը:

ԱՄՆ-Իրան հակադրություն. դրական վերաբերմունքի հստակ սահմանը
Ամերիկյան քաղաքականության նկատմամբ վերապահումներն ամենից հստակ արտահայտվում են Իրանի հարցում: Այստեղ բացասական գնահատականները (մոտ 39%) զգալիորեն գերազանցում են դրականներին (մոտ 15%), իսկ անդրադարձների գրեթե կեսը չեզոք է: Մտահոգության կենտրոնում Հայաստանի հարավային սահմանն է, Իրանի հետ տնտեսական ու էներգետիկ կապերը և տարածաշրջանային պատերազմի վտանգը:

Փորձագետներից մեկը, որը միաժամանակ աջակցում է ԱՄՆ միջնորդությանը և TRIPP-ին, Իրանի դեմ ամերիկյան ռազմական գործողությունները անվանում է «շատ լուրջ սխալ» և «ավանտյուրա»: Մեկ այլ փորձագիտական հրապարակման մեջ նույնպես դրանք որակվում են «արկածախնդրություն»: Այս գնահատականները կարևոր են հենց իրենց հակադրությամբ. ԱՄՆ-ի հետ մերձեցումը պաշտպանողները պարտադիր չէ, որ հավանություն տան Վաշինգտոնի գործողություններին հարևան Իրանի նկատմամբ:

ԱՄՆ-ի հարաբերությունները այլ երկրների հետ
Ադրբեջանի հետ ԱՄՆ շփումները նույնպես միանշանակ վստահություն չեն առաջացնում. խմբի ներկայացուցիչները միաժամանակ հույս են կապում Բաքվի վրա ամերիկյան ազդեցության հետ և զգուշանում ԱՄՆ-Ադրբեջան շահերի առանձին համաձայնություններից: Ռուսաստանի, ԵՄ-ի, Թուրքիայի ու Վրաստանի նկատմամբ ԱՄՆ քաղաքականության մասին խոսելիս մեծ տեղ են գրավում ոչ թե պարզ դրական կամ բացասական գնահատականները, այլ Հայաստանի համար հնարավոր հետևանքները: Իսկ ընտրությունների հարցում արևմտյան աջակցությունը սովորաբար դիտարկում են որպես ժողովրդավարական զարգացման աջակցություն, ոչ թե ուղղակի միջամտություն:

1.2. Եվրոպական միության ընկալումը

ԵՄ-ի վերաբերյալ խմբի դիրքորոշումն ավելի միասնական է, քան ԱՄՆ-ի դեպքում: Հայաստանի նկատմամբ եվրոպական քաղաքականության անդրադարձների մոտ 82%-ը դրական է: ԵՄ-ն գովում են ոչ միայն դիվանագիտական աջակցության համար. նրա հետ են կապում եվրոպական շուկաների հասանելիությունը, քաղաքական ու վարչական բարեփոխումները, վիզաների ազատականացումը և Ռուսաստանի տնտեսական ճնշումներին դիմակայելու հնարավորությունը: Եթե ԱՄՆ-ն առաջին հերթին խաղաղության գործընթացի ու TRIPP-ի գործընկերն է, ապա ԵՄ-ն՝ Հայաստանի երկարաժամկետ զարգացման ու ինստիտուցիոնալ փոփոխությունների հենարանը:

Խաղաղություն և Հայաստանում Եվրոպական միության դիտորդական առաքելություն. սահմանին ներկայությունը գնահատում են որպես արդյունք
Խմբի լրատվամիջոցներն ու փորձագետները դրական են վերաբերվում ԵՄ մասնակցությանը հայ-ադրբեջանական կարգավորմանը: Դրական են գնահատում եվրոպական քաղաքական աջակցությունը, Հայաստանի տարածքային ամբողջականության վերաբերյալ հայտարարությունները և սահմանամերձ շրջանների զարգացման հնարավորությունները: Նրանք հիմնականում ԱՄՆ-ին ու ԵՄ-ին մրցակից միջնորդներ չեն համարում, այլ տեսնում են փոխլրացնող դերեր:

Առանձնապես մեծ է ՀԵՄԱ-ի նկատմամբ աջակցությունը. դրական գնահատականները կազմում են մոտ 84%, իսկ բացասականներ գնահատականներ չկան: 1in.am-ի հունիսյան նյութում առաքելության պաշտպանները հատկապես ընդգծում են, որ եվրոպական դիտորդների ներկայությունը նպաստել է սահմանային կայունությանն ու **զինվորների կյանքի պահպանմանը**: Այս փաստարկը հեռու է վերացական «եվրոպական արժեքներից». առաքելության օգտակարությունը չափում են սահմանին հնարավոր էսկալացիան զսպելու կարողությամբ:

Միաժամանակ փորձագետները չեն պնդում, թե քաղաքացիական դիտորդներն ի վիճակի են փոխարինելու բանակին կամ Հայաստանի պաշտպանական գործընկերներին:

Եվրոպական ընտրությունը՝ շուկաներ, բարեփոխումներ և ավելի արագ քայլերի պահանջ

ԵՄ-ի հետ տնտեսական մերձեցումն այս խոսույթում դարձել է Հայաստանի ինքնուրույնության հարց: 1in.am-ն ու FreeNews-ը եվրոպական շուկաները, ֆինանսական օգնությունը և առևտրային հնարավորությունները պարբերաբար կապում են Ռուսաստանից կախվածության նվազեցման հետ: Հատկապես ուշադրություն են դարձնում Global Gateway-ին, հայկական արտահանման դյուրացմանը, վիզաների ազատականացմանն ու եվրոպական ստանդարտների ներդրմանը: Եվրոպական ուղղությունը ներկայացնում են նաև որպես ավելի արդյունավետ պետական կառավարման և ժողովրդավարական ինստիտուտների զարգացման հնարավորություն:

Բայց խմբի փորձագետները կառավարության քայլերը բավարար չեն համարում: Առանձին հրապարակումներում պահանջում են ԵՄ անդամակցության հստակ ճանապարհային քարտեզ, արագացնել ինստիտուցիոնալ մերձեցումն ու նվազեցնել ռուսական կառույցներից կախվածությունը: 1in.am-ի հունիսյան վերլուծությունը ևս արձանագրում է այդ տարբերությունը. որոշ արևմտամետ բանախոսներ առաջարկում են ավելի վճռական քայլեր, մինչդեռ իշխանության ներկայացուցիչները պաշտպանում են աստիճանական ընթացքը: Հետևաբար, միշտ չէ, որ եվրաինտեգրման աջակցությունը խմբում վերածվում է կառավարության յուրաքանչյուր քայլի հավանության:

ԵՄ-ի մյուս հարաբերությունները և ընտրությունների հարցը

ԵՄ-Ադրբեջան հարաբերություններն ավելի զգուշավոր են գնահատում: Մի կողմից ընդունում են Բաքվի հետ եվրոպական տնտեսական համագործակցության դերը տարածաշրջանային կայունության մեջ, մյուս կողմից քննադատում են Ադրբեջանի հետ էներգետիկ կապերի պատճառով մարդու իրավունքների և խաղաղության հարցերում հնարավոր անհետևողականությունը: ԵՄ-Ռուսաստան հակադրությունը նույնպես միանշանակ դրական չեն ներկայացնում. Ռուսաստանի նկատմամբ ԵՄ քաղաքականությանը վերաբերող անդրադարձներում բացասական բնույթի գնահատականները մեծամասնություն են կազմում, բայց դրանց մի մասը վերաբերում է հենց հակամարտության հետևանքներին, ոչ թե ԵՄ-ից հիասթափությանը:

Ընտրությունների հարցում խմբի ներկայացուցիչներն ընդհանուր առմամբ ողջունում են ԵՄ աջակցությունը հիբրիդային սպառնալիքներից պաշտպանվելու, տեղեկատվական անվտանգության և ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման գործում: Արևմտյան բարձրաստիճան պաշտոնյաների այցերը նրանք չեն համարում ինքնին միջամտություն ընտրություններին: Միաժամանակ հետևում են, թե ինչպես են այդ այցերը մեկնաբանում ներքաղաքական մրցակիցները: Վրաստանի և Թուրքիայի նկատմամբ եվրոպական քաղաքականությունն առավելապես քննարկվում է տարածաշրջանային հաղորդակցությունների և եվրաինտեգրման դժվարությունների համատեքստում:

1.3. Ռուսաստանի ընկալումը

Ռուսաստանի նկատմամբ գնահատականներն ամենակտրուկն են: Խմբի փորձագետներն ու լրատվամիջոցների բանախոսները ոչ միայն քննադատում են Ռուսաստանի այս կամ այն որոշումը, այլ կասկածի տակ են դնում Հայաստանի հետ նրա նախկին դաշնակցային հարաբերությունների հիմքը: Ռուսաստանի՝ Հայաստանի անվտանգության ապահովման դերի գնահատականների մոտ 92%-ը բացասական է, Հայաստանի նկատմամբ քաղաքականության դեպքում՝ մոտ 81%: Ռուսական ազդեցությունը նրանց համար հիմնականում կապվում է անվտանգության չկատարված խոստումների, տնտեսական կախվածությունը որպես ճնշման միջոց օգտագործելու և ներքաղաքական ազդեցության վտանգի հետ:

Անվտանգության ձախողում. «դաշնակից» բառի նկատմամբ անվստահություն

Բանախոսները հերթով հիշեցնում են 2020 թվականի պատերազմը, 2021-2022 թվականների ներխուժումները Հայաստանի տարածք և 2023 թվականի Լեռնային Ղարաբաղի իրադարձությունները: Նրանց հիմնական հարցը պարզ է՝ որտե՞ղ էր դաշնակիցը, երբ Հայաստանին անվտանգային օգնություն էր անհրաժեշտ: 1in.am-ի և FreeNews-ի հաղորդումներում ՀԱՊԿ-ի անգործությունը ներկայացվում է ոչ թե որպես մեկ անհաջող որոշում, այլ ամբողջ ռուսական անվտանգային համակարգի ձախողում:

Գնահատականները երբեմն չափազանց սուր են: Խմբի փորձագիտական հրապարակումներից մեկում Ռուսաստանը բնութագրվում է ոչ թե որպես անվտանգության երաշխավոր, այլ Հայաստանի «ազգային անվտանգության թիվ մեկ էկզիստենցիալ սպառնալիք»: Սա ամբողջ խմբի բառապաշարը չէ, բայց պարզորոշ ցույց է տալիս, թե որքան խորն է ոմանց անվստահությունը նախկին դաշնակցի նկատմամբ: Ավելի չափավոր գնահատականներն էլ հանգում են նույն գործնական պահանջին՝ պաշտպանական համագործակցությունը զարգացնել այլ գործընկերների հետ և նվազեցնել ռուսական ռազմական կախվածությունը:

Խաղաղության գործընթաց. Ռուսաստանին վերագրում են հակամարտությունը պահպանելու շահ

ԱՄՆ միջնորդության դրական գնահատականն այս խմբում հաճախ ունի ռուսական հակապատկերը: Ոմանք պնդում են, որ Մոսկվան շահագրգռված էր չկարգավորված հակամարտությամբ, քանի որ այն Հայաստանի և Ադրբեջանի վրա ազդեցության լծակ էր պահպանում: Լեռնային Ղարաբաղի շրջափակումն ու հայ բնակչության տեղահանությունը օգտագործում են որպես ռուս խաղաղապահների և միջնորդության ձախողման փաստարկներ:

Վաշինգտոնյան պայմանավորվածությունների և TRIPP-ի նկատմամբ Ռուսաստանի քննադատությունը նրանք բացատրում են ոչ թե տարածաշրջանի անվտանգության մտահոգությամբ, այլ նախկին վերահսկողությունը կորցնելու վախով: Այս մեկնաբանությունում խաղաղության օրակարգն ու արտաքին քաղաքական դիվերսիֆիկացումը նույն շղթայի օղակներ են: Միաժամանակ, առանձին նյութերում ընդունում են, որ Ռուսաստանը շարունակում է ազդեցություն ունենալ տարածաշրջանում, իսկ նրա հետ գործնական հարաբերությունները չեն կարող մեկ որոշմամբ վերանալ:

Տնտեսական ճնշումներ և երկաթուղիների հարց. կախվածությունը՝ որպես լծակ

Ռուսաստանին ուղղված քննադատությունը հատկապես առարկայական է տնտեսական թեմաներում: 1in.am-ը, FreeNews-ը և Ֆ1-ը անդրադառնում են հայկական գյուղմթերքի, ծաղիկների, հանքային ջրի և այլ ապրանքների ներմուծման սահմանափակումներին, Վերին Լարսում առաջացող դժվարություններին և գազի գնի վերաբերյալ սպառնալիքներին: Բանախոսները այդ միջոցները կապում են Հայաստանի եվրոպական մերձեցման հետ: Ֆ1-ի հուլիսյան քննարկումներում տնտեսական սահմանափակումները բնութագրում են որպես **«տնտեսական մահակ»**: Այս բառերն ավելի լավ են փոխանցում լրատվամիջոցների այս խմբի վերաբերմունքը, քան պարզապես «բացասական գնահատական» ձևակերպումը:

Սուր է նաև ռուսական երկաթուղային կոնցեսիայի քննադատությունը: Խմբի որոշ փորձագետներ պնդում են, որ «Հարավկովկասյան երկաթուղու» կառավարումը խանգարում է հաղորդակցությունների վերաբացմանը և Հայաստանը պահում է տարածաշրջանային երթուղիների «կույր աղիքի» վիճակում: Նրանք առաջարկում են վերանայել կամ դադարեցնել կոնցեսիան: Մյուսները զգուշացնում են, որ տնտեսական հարաբերությունների կտրուկ խզումը ևս կարող է վնաս հասցնել Հայաստանին: Այս տարբերությունը կարևոր է. Ռուսաստանի կախվածությունից ազատվելու նպատակը լայնորեն ընդունում են, բայց դրա արագության և եղանակների շուրջ համաձայնություն չկա:

Ռուսաստանի հնարավոր ազդեցությունը ընտրությունների վրա

Ընտրական գործընթացին Ռուսաստանի հնարավոր միջամտության մասին խոսույթը նույնպես խիստ քննադատական է. բացասական են գնահատականների մոտ 89%-ը: Լրատվամիջոցներն ու փորձագետները պնդում են, որ ռուսական պաշտոնական, տեղեկատվական և գործարար շրջանակները կարող են աջակցել հայաստանյան քաղաքական ուժերին, ֆինանսավորել քարոզչությունը կամ ազդել հանրային օրակարգի վրա: Հնչում են նաև ընտրողներին կազմակերպված տեղափոխելու և ընտրակաշառքների մասին մեղադրանքներ:

Այստեղ պետք է տարբերակել **մշտադիտարկման ընթացքում արձանագրված մեղադրանքներն ու հաստատված փաստերը**: Սակայն որպես հանրային խոսույթ այդ պնդումները ցույց են տալիս, որ խմբի մի զգալի մասի համար Ռուսաստանը միայն արտաքին գործընկեր կամ մրցակից չէ. նրան ընկալում են որպես Հայաստանի քաղաքական ինքնուրույնությունը ներսից սահմանափակելու հնարավոր դերակատար: Նույն պատճառով տնտեսական ճնշումներն ու տեղեկատվական ազդեցությունը հաճախ քննարկվում են միասին՝ որպես փոխկապակցված գործիքներ:

Մշտադիտարկման արդյունքների ամփոփումից հետո, վերջինները սեպտեմբեր-հոկտեմբերին քննարկվել են նաեւ ֆոկուս խմբերում: Հետազոտության այս երկու փուլերի ընթացքում տվյալների համադրությունը ցույց է տալիս Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի քաղաքականության ընկալման որոշակի փոփոխություն: Հայաստանում խորհրդարանական ընտրությունների շրջանում (ներառյալ նախընտրական և հետընտրական ժամանակահատվածները) Մոսկվայի կիրառած առևտրային սահմանափակումներն ու Երևանի արտաքին քաղաքական ուղեգծի քննադատությունը լուսաբանվում էին ՀՀ քաղաքացիների ընտրական վարքագծի վրա Ռուսաստանի ազդեցության համատեքստում:

Մասնավորապես, հայկական տեղեկատվական դաշտի պայմանականորեն իշխանամետ և չեզոք հատվածներում ենթադրվում էր, որ ընտրություններից հետո հայ-ռուսական հարաբերությունները հիմնականում կվերադառնան սովորական հուն: Սակայն, սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ֆոկուս-խմբային քննարկումների համաձայն, Մոսկվայի ճնշումներն ու Երևանի հետ հակասությունները ձեռք են բերում համակարգային բնույթ՝ ընդգրկելով Հայաստանի՝ ԵՄ-ի հետ մերձեցման, երկրում ռուսական ռազմական ներկայության, գազամատակարարման, էներգետիկայի և տրանսպորտային հաղորդակցությունների, ինչպես նաև հայկական ապրանքների՝ Ռուսաստանի շուկա մուտքի հարցերը:

Այլ կերպ ասած՝ Ռուսաստանի դերակատարության քննարկումները զգալիորեն փոխակերպվել են՝ իրավիճակային և ընտրական գործընթացներով պայմանավորված բնույթից անցնելով առավել առարկայական խնդիրների քննարկման:

1.4. Թուրքիայի ընկալումը

Թուրքիայի հարցում խմբի փորձագետներն ու լրատվամիջոցների բանախոսները ավելի քիչ են խոսում միանշանակ «կողմ» կամ «դեմ» դիրքերից: Թուրքիայի՝ Հայաստանի նկատմամբ քաղաքականության անդրադարձների գրեթե կեսը չեզոք է, իսկ դրականն ու բացասականը միմյանց մոտ են: Այս պատկերի հետևում հստակ տարբերակում կա. **Թուրքիայի հետ սահմանի բացումը ցանկանում են, բայց Անկարայի քաղաքականությանը լիովին չեն վստահում**:

Սահմանի բացման տնտեսական օգուտը
Դրական գնահատականների կենտրոնում սահմանն ու երկաթուղին են: 1in.am-ի և FreeNews-ի քննարկումներում, ինչպես նաև խմբի որոշ փորձագիտական հրապարակումներում Գյումրի-Կարս կապի վերագործարկումը համարում են եվրոպական շուկաներ դուրս գալու և տարածաշրջանային մեկուսացումը նվազեցնելու գործնական հնարավորություն: Այն կարող է նաև թուլացնել կախվածությունը Ռուսաստանի վերահսկողության տակ գտնվող առանձին փոխադրուղիներից: Այստեղ հարևանի հետ հարաբերությունների կարգավորմանը աջակցում են առաջին հերթին Հայաստանի շահի տեսանկյունից:

Ոմանք շեշտում են, որ ծրագրերի մասին խոսելն ու սահմանը փաստացի բացելը տարբեր բաներ են: Նրանք հարցնում են, թե ինչու չեն իրականացվում արդեն քննարկված քայլերը, և որքանով են պատրաստ տեխնիկական ու քաղաքական պայմանները: Դրական տրամադրվածությունը, հետևաբար, կապված է բացման ակնկալիքի, ոչ թե Թուրքիայի գործող քաղաքականության անվերապահ հավանության հետ:

Ադրբեջանի գործոնը և պահպանվող անվստահությունը
Թուրքիայի նկատմամբ հիմնական բացասական փաստարկը նրա քաղաքականության կապն է Ադրբեջանի դիրքորոշումների հետ: Փորձագիտական անդրադարձներից մեկում այդ կախվածությունը ձևակերպվում է առավել սուր՝ Թուրքիան դարձել է Ադրբեջանի քաղաքականության «գերին»: Մյուս գնահատականներում հիշեցնում են 2020 թվականի պատերազմի ժամանակ Անկարայի աջակցությունը Բաքվին և Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման երկարատև ձգձգումը:

Այսպիսով, նույն խմբում հնարավոր է միաժամանակ պաշտպանել Հայաստան-Թուրքիա հաղորդակցությունների բացումը և քննադատել Թուրքիայի պայմանական քաղաքականությունը: Սա ոչ թե անհետևողականություն է, այլ շահավետ կարգավորումը Անկարայի նկատմամբ վստահությունից տարանջատելու փորձ:

Ինչպես ցույց են տվել ֆոկուս-խմբային քննարկումները, լրատվամիջոցների և փորձագիտական շրջանակների զգալի հետաքրքրությունն է առաջացրել Բաքվի և Անկարայի միջև լարվածությունը՝ կապված Ադրբեջանում հիջաբ կրելու սահմանափակումների հետ: Հնչել է տեսակետ, որ հակասությունների պատճառը Թուրքիայի՝ Հայաստանի հետ սահմանը բացելու մտադրությունն էր:

Այդուհանդերձ, հանրային քննարկումներում գերակշռել է այն մոտեցումը, որ պետք չէ առանձնակի նշանակություն տալ թուրք-ադրբեջանական հարաբերությունների իրավիճակային սառեցմանը և այն դիտարկել որպես Երևանի համար դրական գործոն: Վերլուծաբանների և մեկնաբանների մեծամասնության դիրքորոշումն այն էր, որ Հայաստանի հարևանների միջև տարաձայնությունները չեն կարող բխել երկրի արտաքին քաղաքական շահերից:

1.5. Իրանի ընկալումը

Իրանի նկատմամբ խմբի վերաբերմունքը հիմնականում բարենպաստ և զգուշավոր է. Հայաստանի նկատմամբ Իրանի քաղաքականության գնահատականների մոտ կեսը դրական է, գրեթե նույնքանն էլ՝ չեզոք, իսկ բացասականները եզակի են: Խմբի խոսույթում Իրանը հանդես է գալիս որպես կարևոր հարևան, որի հետ էներգետիկ, տնտեսական և սահմանային կապերը պետք է պահպանել ու զարգացնել՝ անկախ ԱՄՆ-ի և այլ միջազգային խաղացողների հետ խորացող գործընկերությունից:

Հարավային սահմանը և պատերազմի վտանգը
Իրանի քաղաքականության դրական գնահատականները շատ հաճախ կապված են Հայաստանի տարածքային ամբողջականության և հայ-իրանական սահմանի անփոփոխելիության վերաբերյալ Թեհրանի դիրքորոշումների հետ: Դրանք դիտարկում են որպես Սյունիքի և տարածաշրջանային հաղորդակցությունների շուրջ կարևոր ազդակ: Սակայն փորձագետները նաև ընդգծում են, որ Իրանը պաշտպանում է առաջին հերթին սեփական շահերը, և հարևանի քաղաքական աջակցությունը չի կարող փոխարինել Հայաստանի անվտանգության սեփական միջոցներին:

ԱՄՆ-Իրան ռազմական հակադրության առնչությամբ նույն խոսույթում հնչում է ավելի անհանգիստ գնահատական: Խմբի փորձագետներն ու լրատվամիջոցների բանախոսները մտահոգվում են, որ պատերազմը կարող է խաթարել Հայաստանի հարավային տնտեսական կապերը, էներգետիկ ծրագրերը և նոր տարանցիկ նախաձեռնությունները: Այս հարցը ամենից պարզ է ցույց տալիս խմբի մոտեցումը. **ԱՄՆ-ի գործընկեր լինելը չի պահանջում Իրանի դեմ ճնշմանն աջակցել**:

Էներգետիկ համագործակցություն և TRIPP-ի հետ համատեղելիություն
Խմբի ներկայացուցիչները դրական են գնահատում Իրանի հետ «գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագիրը, Հյուսիս-Հարավ հաղորդակցությունները և սահմանամերձ ենթակառուցվածքները: Նրանք Իրանին տեսնում են ոչ միայն

որպես հարևան, այլև որպես էներգետիկ մատակարարումների և առևտրային ուղիների դիվերսիֆիկացման կարևոր հնարավորություն:

TRIPP-ի շուրջ իրանական հնարավոր մտահոգությունները քննարկելիս գերակշռում է շահերի համատեղելիությունը պահպանելու մոտեցումը: Որոշ փորձագետներ համոզված են, որ Հայաստանի վերահսկողությամբ գործող երթուղին կարող է օգտակար լինել նաև իրանական բեռնափոխադրումների համար: Մյուսները զգուշացնում են, որ ամերիկյան ներկայությունը կարող է քաղաքական լարվածություն ստեղծել: Հետևաբար Իրանի հետ հարաբերությունների պահպանումը ոչ թե արևմտյան ուղղության այլընտրանք են ներկայացնում, այլ Հայաստանի բազմակողմ կապերը հավասարակշռելու անհրաժեշտություն:

1.6. Վրաստանի ընկալումը

Վրաստանի մասին խմբում քիչ են բանավիճում: Նրա քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ հիմնականում չեզոք կամ դրական են գնահատում. չեզոք անդրադարձները մոտ 52% են, դրականները՝ 44%: Գլխավոր հարցը պարզ է՝ ինչպես պահպանել Հայաստանի համար կարևոր տարանցիկ կապերը և չդառնալ կողմ հարևանի ներքաղաքական ու արտաքին քաղաքական հակասությունների հարցերում:

Անփոխարինելի տարանցիկ գործընկերը
Խմբի փորձագետներն ու լրատվամիջոցների բանախոսները Վրաստանը տեսնում են որպես դեպի Սև ծով և եվրոպական շուկաներ Հայաստանի հիմնական ելքերից մեկը: Դրական են վերաբերվում երկաթուղային և ճանապարհային կապերին, բեռնափոխադրումների ու առևտրի հնարավորություններին: Տարանցիկ ծախսերի, Վերին Լարսի խնդիրների և սահմանափակ երթուղիներից կախվածության քննադատությունը սովորաբար չեն վերածում Վրաստանի նկատմամբ բացասական քաղաքական վերաբերմունքի:

Խաղաղության գործընթաց և տարածաշրջանային մրցակցություն
Հայ-ադրբեջանական կարգավորման հարցում Վրաստանին հիմնականում տեսնում են որպես խաղաղությունից շահող հարևան, ոչ թե գլխավոր միջնորդ: Նոր ճանապարհները կարող են փոխել տարածաշրջանի տարանցիկ քարտեզը, բայց նաև մեծացնել համագործակցության ընդհանուր հնարավորությունները: Վրաստանի և ԵՄ-ի հարաբերությունների դժվարությունները ժամանակ առ ժամանակ համեմատում են Հայաստանի եվրոպական հեռանկարների հետ՝ առանց երկու երկրների իրավիճակները նույնացնելու: Ընդհանուր տրամադրությունը գործնական է՝ բարիդրացիական հարաբերությունները և հաղորդակցությունների անվտանգությունը կարևոր են՝ անկախ տարածաշրջանային մյուս տարաձայնություններից:

Ընդհանուր դիտարկում

Այս խմբի խոսույթում միջազգային դերակատարներին դիտարկում են առաջին հերթին Հայաստանի ինքնիշխանության, անվտանգության և արտաքին քաղաքական հնարավորությունների տեսանկյունից: ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ մերձեցմանն աջակցում են, որովհետև դրանում տեսնում են խաղաղության, զարգացման և կախվածությունների նվազեցման ճանապարհ: Ռուսաստանին

քննադատում են հիմնականում չկատարված անվտանգային պարտավորությունների, տնտեսական ճնշումների և հնարավոր ներքաղաքական ազդեցության համար: Իրանի, Թուրքիայի և Վրաստանի նկատմամբ ավելի շատ խոսում են հարևանության կոնկրետ շահերի ու ռիսկերի մասին:

2. Պայմանականորեն ընդդիմադիր լրատվամիջոցների և փորձագետների թեմատիկ վերլուծություն

2.1. ԱՄՆ-ի ընկալումը

Պայմանականորեն ընդդիմադիր խմբում ԱՄՆ-ի նկատմամբ վերաբերմունքը շատ ավելի հակասական է, քան կարող է թվալ կառավարության արևմտյան քաղաքականության քննադատությունից: 24News-ի, 168.am-ի և 5TV-ի քննարկումներում Վաշինգտոնի նախաձեռնություններին հաճախ չեն վստահում, հատկապես երբ դրանք կապվում են Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության, TRIPP-ի և առաջիկա ընտրությունների հետ: Այդուհանդերձ, խմբի որոշ փորձագետներ հենց ԱՄՆ-ի հետ են կապում Հայաստանի անվտանգության նոր հնարավորությունները: Հետևաբար, այստեղ չկա միասնական «հակաամերիկյան» դիրքորոշում. ավելի հաճախ վիճարկում են **ամերիկյան քաղաքականության նպատակները, անվտանգության երաշխիքները և Հայաստանի կառավարության՝ դրանցից օգտվելու կարողությունը**:

Խաղաղության միջնորդություն. անվստահություն՝ առանց ԱՄՆ հնարավորությունները մերժելու

Հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում ԱՄՆ-ի դերի գնահատականների գրեթե կեսը բացասական է (39-ը՝ 83-ից), իսկ դրականները կազմում են մոտ մեկ հինգերորդը: Բացասական մոտեցման կողմնակիցները կասկածում են, թե Վաշինգտոնը պատրաստ է Հայաստանի անվտանգության համար իրական պատասխանատվություն ստանձնել: Նրանց կարծիքով՝ ԱՄՆ-ն շահագրգռված է առաջին հերթին Ռուսաստանի և Իրանի ազդեցության թուլացմամբ, մինչդեռ հայ-ադրբեջանական պայմանավորվածությունների կատարումն ու Ադրբեջանի հնարավոր նոր պահանջները մնում են անորոշ: 168.am-ի և 24News-ի հաղորդումներում այդ պատճառով խաղաղության խոստումները երբեմն ներկայացվում են որպես Հայաստանի վրա հավելյալ ճնշումների քողարկում:

Բայց նույն խմբում հնչում է նաև հակառակ կարծիք: Փորձագետներից մեկը դրական է գնահատում Սպիտակ տան միջնորդական հնարավորությունները՝ պնդելով, որ ամերիկյան ներգրավվածությունը որոշ պահերի զսպել է Ադրբեջանի ռազմական նկրտումները: Նա քննադատում է ոչ թե ԱՄՆ-ի հետ գործընկերությունը, այլ այն, որ Հայաստանի իշխանությունները բավարար չափով չեն օգտագործում Վաշինգտոնի ազդեցությունը: Մեկ այլ փորձագետ նույնիսկ առաջարկում է ԱՄՆ-ից ստանալ ՆԱՏՕ-ի ոչ անդամ հիմնական դաշնակցի կարգավիճակ: Այս տեսակետները չեն գերակշռում խմբի ընդհանուր խոսույթում, սակայն կարևոր են. կառավարության խաղաղության քաղաքականության քննադատությունը պարտադիր չէ, որ նշանակի՝ ամերիկյան անվտանգության գործընկերությունը մերժել:

TRIPP. տնտեսական ուղուց մինչև «Զանգեզուրի միջանցքի» նոր անվանում

TRIPP-ի հարցում դիրքորոշումն անհամեմատ հստակ է. 161 գնահատականից 116-ը՝ մոտ 72%-ը, բացասական են, և ընդամենը 7-ն են դրական: Քննադատները հարցնում են՝ ո՞ւմ է իրականում ձեռնտու ճանապարհը, ո՞վ է վերահսկելու երթուղին, և ի՞նչ երաշխիք կա, որ հաղորդակցությունների բացումը չի վերածվի Հայաստանի վրա թուրք-ադրբեջանական ճնշման նոր գործիքի: Նրանք նախագծի տնտեսական խոստումներին հակադրում են Սյունիքի անվտանգության և Իրանի հետ սահմանի պահպանման հարցը:

168.am-ի ապրիլյան քննարկման մասնակիցներից մեկը նախագծին այսպիսի պատկերավոր բնորոշում է տալիս. **«Զանգեզուրի միջանցքին LEVIS շալվար են հագցրել ու ասում են՝ TRIPP-ն է»**: 5TV-ի հունիսյան եթերում հնչում է նույն տրամաբանությունը՝ TRIPP-ը «նույն Զանգեզուրի միջանցքն» է և կարող է ծառայել «Մեծ Թուրանի» ծրագրին: Այս արտահայտությունները ցույց են տալիս իշխանամետ խմբի հետ հիմնական հակադրությունը. մի կողմը ճանապարհը համարում է Հայաստանի իրավազորությամբ միջանցքային պահանջը չեզոքացնելու միջոց, մյուսը՝ նույն պահանջը նոր ձևով իրականացնելու վտանգ:

Քննադատության են արժանանում նաև ԱՄՆ-ի ներգավվածության հետ կապված զարգացումները, որոնք որպես հետևանք կարող են վնասել Հայաստան-Իրան և Հայաստան-Ռուսաստան հարաբերություններին: 24News-ի մայիսյան հաղորդումներում բանախոսները մտահոգվում են, որ ամերիկյան մասնակցությամբ նախագիծը կարող է Սյունիքը դարձնել մեծ տերությունների հակադրության գոտի: Առանձին փորձագիտական հրապարակման մեջ TRIPP-ը նույնիսկ անվանվում է Հարավային Կովկասի հավասարակշռությունը խախտող նախաձեռնություն:

Միաժամանակ, խմբում արտահայտված դիրքորոշումներում կան բացառություններ: Փորձագետներից մեկը TRIPP-ը համարում է հնարավոր շահավետ հայ-ամերիկյան նախագիծ, եթե մուտքի և ելքի վերահսկողությունը լիովին պահպանվի Հայաստանի ձեռքում և բացառվի արտատարածքային կարգավիճակը: Նա նույնպես քննադատում է կառավարությանը, բայց հակառակ եզրահանգման է գալիս՝ ամերիկյան հնարավորություններից պետք է ավելի լավ օգտվել: Հետևաբար, TRIPP-ի շուրջ առավել սուր տարաձայնությունը վերաբերում է ոչ միայն նախագծին, այլև այն հարցին՝ **արդյո՞ք Հայաստանը կարող է դրանով ամրապնդել իր վերահսկողությունը, թե՞ կորցնելու է այն**:

Հայաստանի նկատմամբ քաղաքականություն, Իրան և ընտրություններ

Հայաստանի նկատմամբ ԱՄՆ քաղաքականության վերաբերյալ բացասական գնահատականները ընդդիմադիր խմբում կազմում են մոտ 54%: Քննադատները հատկապես թերահավատ են բարձր մակարդակի այցերի, ռազմավարական գործընկերության հայտարարությունների և տնտեսական խոստումների նկատմամբ: 5TV-ում և 168.am-ում հաճախ հարցնում են՝ ի՞նչ է մնալու Հայաստանի ձեռքում, եթե ամերիկյան ուշադրությունը կամ քաղաքական առաջնահերթությունները փոխվեն: Փորձագետներից մեկը Թրամփի անկանխատեսելիությունը մատնանշում է հեգնական հարցով՝ **ինչպե՞ս կարող է «գերփոփոխական Թրամփը» 99 տարով երաշխավորել Հայաստանի անվտանգությունը**: Միաժամանակ, 5TV-ում դրական են գնահատվել ԱՄՆ

կոնգրեսականների՝ հայ գերիների ազատման և արցախցիների վերադարձի իրավունքի հարցերը բարձրաձայնելու նախաձեռնությունները:

ԱՄՆ-ի՝ Իրանի նկատմամբ քաղաքականության քննադատությունն ավելի ուժեղ է. գնահատականների 63%-ը բացասական է: Ամերիկյան ռազմական գործողություններն ու ճնշումները դիտարկում են առաջին հերթին Հայաստանի հարավային սահմանների, Իրանի հետ տնտեսական կապերի և տարածաշրջանային պատերազմի ռիսկերի տեսանկյունից: Իրանի նկատմամբ այս զգուշավորությունը համընկնում է իշխանամետ խմբի որոշ մտահոգությունների հետ, բայց ընդդիմադիր խոսույթում այն ավելի հաճախ վերածվում է TRIPP-ի և Հայաստանի արևմտյան ուղղության ընդհանուր քննադատության: ԱՄՆ-ի քաղաքականությունն Ադրբեջանի և Թուրքիայի նկատմամբ ևս հաճախ գնահատում են Բաքվի նկատմամբ իրական ճնշման բացակայության ու տարածաշրջանային ուժերի գործարքների հնարավորության տեսանկյունից:

Առանձնապես կոշտ է ԱՄՆ-ի հնարավոր ընտրական ազդեցության գնահատականը. 74 անդրադարձից 55-ը՝ շուրջ 74%-ը, բացասական են: 24News-ի և 5TV-ի եթերում ամերիկյան պաշտոնյաների այցերն ու գործող իշխանություններին ուղղված դրական հայտարարությունները մի շարք բանախոսներ համարում են նախընտրական քաղաքական աջակցություն: Իշխանամետ խմբում նույն շփումները հաճախ ընկալում են որպես Հայաստանի ժողովրդավարական և արտաքին քաղաքական ընտրության աջակցություն:

2.2. Եվրոպական միության ընկալումը

ԵՄ-ի նկատմամբ ընդդիմադիր խմբի խոսույթն ավելի հետևողականորեն քննադատական է, քան ԱՄՆ-ի: Հայաստանի նկատմամբ եվրոպական քաղաքականության մասին 291 գնահատականից 198-ը՝ մոտ 68%-ը, բացասական են: Բայց հակադրության կենտրոնում միայն «Եվրոպա՞, թե՞ Ռուսաստան» ընտրությունը չէ: Շատերը կասկածի տակ են դնում, որ Եվրոպան կարող է Հայաստանի համար ապահովել այն, ինչի մասին խոսում են պաշտոնական այցերի, ֆինանսավորման և անվտանգության քննարկումների ժամանակ: Մյուսները ԵՄ-ին քննադատում են ոչ թե աշխարհաքաղաքական դերի, այլ՝ **իր հռչակած արժեքներին հետևողական չլինելու** համար:

Խաղաղություն և ՀԵՄԱ. դիտորդների ներկայությունը բավարար երաշխիք չեն համարում

ԵՄ-ի միջնորդական դերի վերաբերյալ բացասական գնահատականները գրեթե 69% են, իսկ ՀԵՄԱ-ի դեպքում՝ մոտ 64%: 168.am-ի և 24News-ի քննարկումներում քննադատում են այն ենթադրությունը, թե եվրոպական դիվանագիտական աջակցությունն ինքնին կարող է կանխել Ադրբեջանի ուժային քաղաքականությունը: Պրահայի և եվրոպական այլ հարթակներում ձեռք բերված պայմանավորվածությունները ոմանք կապում են Արցախի հարցում Հայաստանի դիրքերի թուլացման հետ: Եվրոպական դիտորդներին էլ մեղադրում են սահմանային միջադեպերը կանխելու գործնական կարողություն չունենալու մեջ:

168.am-ի ապրիլյան նյութում ՀԵՄԱ-ի նկատմամբ հնչում է նույնիսկ **«թազա փորձանք»** բնորոշումը: Սա հակադիր է իշխանամետ խոսույթին, որտեղ առաքելության ներկայությունը համարում են սահմանային լարվածությունը զսպող շոշափելի արդյունք: Ընդդիմադիր խմբում հարցադրումը այլ է՝ եթե

քաղաքացիական դիտորդները ռազմական պաշտպանություն չեն տրամադրում, ապա որքանո՞վ կարող են նրանք փոխարինել Հայաստանի նախկին անվտանգային պայմանավորվածություններին: Այդուհանդերձ, ամբողջ խումբը դրական է գնահատում եվրոպական կառույցներում Ադրբեջանի դեմ ընդունված բանաձևերը, ինչպես նաև եվրոպացի պաշտոնյաների՝ Իլհամ Ալիևին ուղղված հրապարակային քննադատությունը:

Եվրոպական ինտեգրում. «հույս վաճառելու» մեղադրանքը

ԵՄ-ի հետ մերձեցումը քննադատողները պնդում են, որ Հայաստանի տնտեսությունը պատրաստ չէ արագ մուտք գործելու եվրոպական շուկա, իսկ պաշտոնական խոստումները չափազանցված են: 5TV-ի հունիսյան քննարկումներում եվրոպական ուղղությամբ արտահանման խորհրդանշական նախաձեռնությունները ծաղրում են որպես **«յոթ հատիկ ծիրանով եվրոպական ֆոտոսեսիաներ»**: Այլ մասնակիցներ ասում են, թե Հայաստանի քաղաքացիներին «սին հույսեր» են տալիս կամ «փափուկ բարձ» դնում նրանց գլխի տակ: Այս հեգնանքը միայն եվրոպական շուկայի մասին չէ. քննադատներն այն օգտագործում են ցույց տալու համար, որ իրենց կարծիքով ՀՀ իշխանությունները արտաքին քաղաքականությունը ներկայացնում են որպես հաջողություն՝ առանց դրա տնտեսական գինը և իրագործելիությունը բացատրելու:

Մեծ ուշադրություն են դարձնում նաև ԵԱՏՄ-ից հնարավոր դուրս գալու, ռուսական շուկայի կորստի, գազի գնի և գյուղատնտեսական արտահանման ռիսկերին: 24News-ի մայիսյան նյութերում ԵՄ տնտեսական առաջարկները ներկայացվում են որպես ռուսական շուկային ու էներգետիկ կապերին ոչ համարժեք փոխարինող: Միաժամանակ, առանձին փորձագետը, որը խիստ քննադատում է կառավարության եվրոպական քաղաքականությունը, ինքն է առաջարկում ԵՄ-ի հետ ազատ առևտրի ավելի խոր պայմանավորվածություններ և եվրոպական շուկա գյուղմթերքի արտահանման ռազմավարություն: Այս դիրքորոշումը ցույց է տալիս, որ եվրոպական ուղղության նկատմամբ քննադատությունը միշտ չէ, որ նույնն է, ինչ տնտեսական մերձեցման մերժումը:

Ադրբեջանի հետ հարաբերություններ և ընտրական ազդեցություն

ԵՄ-Ադրբեջան հարաբերություններն ընդդիմադիր խոսույթում հատկապես քննադատում են էներգետիկ շահերը որպես առաջնահերթություն դիտարկելու պատճառով: Խմբի փորձագետների ու լրատվամիջոցների բանախոսների կարծիքով՝ եվրոպական կառույցները մարդու իրավունքների և խաղաղության սկզբունքների մասին խոսում են մի կերպ, բայց Բաքվի հետ գործարքներում առաջնորդվում են այլ տրամաբանությամբ: Այդ պատճառով որոշ փորձագետներ ԵՄ-ից պահանջում են ավելի հստակ դիրքորոշում հայ գերիների, Արցախի հայերի իրավունքների և Ադրբեջանի նկատմամբ ճնշման հարցերում: Այս պահանջը մասամբ համընկնում է իշխանամետ խմբում հնչող վերապահումներին, թեև այստեղ այն վերածվում է եվրոպական քաղաքականության նկատմամբ ընդհանուր վստահելիության մերժման:

Ամենասուր հակադրությունը կրկին ներքաղաքական ոլորտում է: ԵՄ-ի՝ Հայաստանի ընտրությունների վրա ազդեցության վերաբերյալ 130 գնահատականից 109-ը՝ մոտ 84%-ը, բացասական են: 24News-ի հաղորդումներում եվրոպական պաշտոնյաների այցերը բնորոշվում են որպես գործող իշխանություններին տրվող **«նախընտրական բոնուսներ»**, իսկ 168.am-ում քննադատում են եվրոպական կառույցներին՝ իշխանության ենթադրյալ

խախտումների նկատմամբ լռության համար: Իշխանամետ խոսույթը ԵՄ աջակցությունը հիմնականում կապում է ժողովրդավարության և հիբրիդային սպառնալիքներին դիմակայելու հետ, մինչդեռ այստեղ այն հաճախ համարում են ընտրական մրցակցության մի կողմին աջակցություն:

Ռուսաստանի նկատմամբ ԵՄ քաղաքականությունն ընդդիմադիր խմբում ևս գերազանցապես բացասական է գնահատվում: Խմբի փորձագետներն ու լրատվամիջոցների բանախոսները զգուշացնում են, որ եվրոպա-ռուսական հակադրության խորացումը կարող է Հայաստանի համար ստեղծել լրացուցիչ տնտեսական ու անվտանգային ռիսկեր: Վրաստանի և Թուրքիայի նկատմամբ ԵՄ քաղաքականությունն ավելի հաճախ դիտարկում են տարածաշրջանային զարգացումների և եվրաինտեգրման իրատեսականության համատեքստում, ոչ որպես առանձին առանցքային թեմա:

Միաժամանակ, ինչպես նշել են ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցները, տեղեկատվական դաշտի ընդդիմադիր հատվածում տարանջատվում են ԵՄ-ի աշխարհաքաղաքական դերակատարությունը տարածաշրջանում, որի նկատմամբ գերակշռում է բացասական վերաբերմունքը, և, ինչպես նշվել է վերևում, եվրոպական կառույցների ընդունած փաստաթղթերի դրական գնահատականները՝ կապված Բաքվում դատապարտված հայերի և արցախահայության վերադարձի իրավունքի հարցերի հետ:

Ընդդիմադիր շրջանակներում առանձնակի հավանության են արժանացել նաև սեպտեմբերի վերջին հրապարակված՝ Հայաստանում խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ միջազգային դիտորդների՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) առաքելության զեկույցի քննադատական դրույթները:

2.3. Ռուսաստանի ընկալումը

Ռուսաստանի վերաբերյալ ընդդիմադիր խմբի ներսում տարբերություններն ամենակարևորներից են: Ի տարբերություն իշխանամետ խմբի գրեթե ամբողջությամբ քննադատական խոսույթի՝ այստեղ հնչում են և՛ Ռուսաստանի հետ անվտանգության ու տնտեսական կապերը պահպանելու պահանջներ, և՛ Մոսկվայի քաղաքականության կոշտ քննադատություններ: Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի քաղաքականության անդրադարձների մեծ մասը չեզոք է (236-ը՝ 393-ից), իսկ դրական ու բացասական գնահատականները համեմատաբար մոտ են: Սակայն **չեզոք գրանցումների գերակշռությունը չի նշանակում անվիճելի աջակցություն Ռուսաստանին**. նյութերից շատերը նկարագրում են Հայաստանի կախվածությունը, ռուսական ճնշումները կամ հարաբերությունների գործնական սահմանափակումները՝ առանց միանշանակ դրական կամ բացասական եզրահանգման:

Անվտանգություն. «անփոխարինելի դաշնակից» և չկատարված պարտավորություններ

Հայաստանի անվտանգության ապահովման գործում Ռուսաստանի դերի 163 գնահատականից 71-ը դրական են, 40-ը՝ բացասական, 52-ը՝ չեզոք: 5TV-ի հունիսյան եթերում որոշ բանախոսներ Ռուսաստանին համարում են Հայաստանի իրական ռազմավարական դաշնակիցը և զգուշացնում, որ առանց համարժեք այլընտրանքի ՀԱՊԿ-ից կամ ռուսական անվտանգային համակարգից հեռանալը

կարող է մեծացնել Ադրբեջանի և Թուրքիայի ճնշումը: Նրանց գլխավոր փաստարկն այն է, որ Հայաստանի անվտանգությունը չի կարելի կառուցել դեռ չստացված արևմտյան խոստումների վրա:

Բայց խմբում կա նաև կտրուկ հակադիր մոտեցում: Փորձագետներից մեկը Ռուսաստանին համարում է Հայաստանի ինքնիշխանությանը սպառնացող հիմնական ուժ և պահանջում անհապաղ դուրս գալ ՀԱՊԿ-ից, ԵԱՏՄ-ից ու ԱՊՀ-ից: Մեկ այլ փորձագետ հիշեցնում է ռուս խաղաղապահների անգործությունը Արցախի շրջափակման և 2023 թվականի ռազմական գործողությունների ժամանակ, ինչպես նաև 2021-2022 թվականներին Հայաստանի նկատմամբ ստանձնած պարտավորությունների չկատարումը: 5TV-ի մայիսյան նյութում ռուսական ներկայությունը մի բանախոս նույնիսկ բնորոշում է որպես **«մահացու գրկախառնություն»**: Այս ձայները ցույց են տալիս, որ խմբի ընդհանուր քննադատական դիրքավորումը կառավարության նկատմամբ չի վերածվում Ռուսաստանի դրական ընկալման միասնականության:

Խաղաղության գործընթաց և Հարավային Կովկասի անվտանգություն
Ռուսաստանի ազդեցությունը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում գնահատում են տարբեր կերպ: Ոմանք պնդում են, որ Մոսկվայի մասնակցությունը պետք է պահպանել՝ որպես տարածաշրջանային ուժային հավասարակշռության տարր, իսկ մյուսները նրան մեղադրում են Ադրբեջանի հետ գործարքների և 2020 թվականի նոյեմբերի 9-ի հայտարարության պարտավորությունները չկատարելու մեջ: Հատկապես Արցախի հայերի տեղահանությունը քննադատող փորձագետները չեն ընդունում այն պնդումը, թե ռուսական ներկայությունը կարող էր ինքնաբերաբար պաշտպանել հայկական շահերը:

Միաժամանակ, տարածաշրջանային անվտանգության ընդհանուր հարցում Ռուսաստանի դրական գնահատականներն ավելի շատ են, քան բացասականները. 62-ը՝ 104-ից: Սա հիմնականում արտահայտում է այն մոտեցումը, որ Ռուսաստանը շարունակում է ունենալ ռազմական, քաղաքական և աշխարհագրական ազդեցություն, որը հնարավոր չէ անտեսել նոր անվտանգային համակարգ նախագծելիս: Որոշ փորձագետներ ՌԴ-ի փաստացի ուժային ներկայության այլընտրանքը չլինելու ճանաչումից չեն անցնում Ռուսաստանի նախկին քաղաքականության արդարացման:

Հայաստանի նկատմամբ քաղաքականություն. կախվածությունը՝ և՛ պաշտպանություն, և՛ ճնշման աղբյուր
24News-ի, 168.am-ի և 5TV-ի քննարկումներում հաճախ են զգուշացնում Ռուսաստանի հետ տնտեսական կապերը կտրուկ վատթարացնելու հետևանքների մասին: Ռուսական շուկան, գազի մատակարարումները, ԵԱՏՄ անդամակցությունը և Վերին Լարսով բեռնափոխադրումները ներկայացվում են որպես Հայաստանի տնտեսության համար դեռևս կարևոր համակարգեր: Ըստ այս մոտեցման՝ կառավարությունը վտանգում է գործող հնարավորությունները՝ առանց նոր շուկաներ կամ անվտանգության համարժեք փոխարինողներ ունենալու: Ռուս պաշտոնյաների տնտեսական նախազգուշացումները ոմանք մեկնաբանում են որպես Երևանի քայլերի կանխատեսելի հետևանք:

Սակայն նույն աղբյուրներում արձանագրվում են Ռուսաստանի կողմից հայկական գյուղմթերքի նկատմամբ կիրառված սահմանափակումները, Լարսի դժվարությունները և գազի հնարավոր թանկացման մասին

հայտարարությունները: Փորձագետներից մեկը քննադատում է այդ ճնշումները, մյուսը՝ Հայաստանի կառավարության անպատրաստությունը դրանց դիմակայելու հարցում: Այսպիսով, **ռուսական տնտեսական կախվածության փաստը ծառայում է երկու տարբեր եզրահանգման**. մի խումբը հորդորում է չխզել հարաբերությունները, մյուսը՝ ավելի արագ ազատվել Մոսկվայի ազդեցության լծակներից:

Ընտրություններ և արտաքին ազդեցություն
Ռուսաստանի հնարավոր ընտրական ազդեցության վերաբերյալ ընդդիմադիր խմբում գերակշռում են չեզոք գնահատականները. 96-ը՝ 130-ից: Ի տարբերություն իշխանամետ խոսույթի՝ այստեղ Ռուսաստանի ենթադրյալ միջամտությունն ինքնին չի դառնում քննարկումների գլխավոր քննադատական առանցք: Ավելի հաճախ հարցականի տակ են դնում կառավարության՝ «ռուսամետ ուժերի» կամ ռուսական միջամտության վերաբերյալ մեղադրանքները, անդրադառնում ռուս պաշտոնյաների հայտարարություններին և դրանք համադրում արևմտյան երկրների ակտիվության հետ:

Միաժամանակ, խմբի տարբեր հարթակների մի շարք բանախոսներ Հայաստանի ներքաղաքական կյանքի վրա Ռուսաստանի ազդեցության հնարավորությունը չեն ժխտում: Տարաձայնությունը վերաբերում է նրան, թե ինչն է համարվում ապացուցված միջամտություն և ինչն է ծառայում ներքաղաքական պայքարում արհեստական մեղադրանքների ներկայացմանը: Հետևաբար ընտրությունների թեմայում «չեզոք» գնահատականը հաճախ ցույց է տալիս այդ մեղադրանքների վերաբերյալ մեկնաբանություն, ոչ թե Ռուսաստանի ներգրավվածության սկզբունքային ընդունում կամ մերժում:

Տրանսպորտային հաղորդակցություններ. հին կապերի պահպանման փաստարկը
Տարածաշրջանային հաղորդակցությունների վերաբացման մեջ Ռուսաստանի դերի մասին 84 գնահատականից 35-ը դրական են, 19-ը՝ բացասական: Քննարկումներում կարևորում են գործող երկաթուղային համակարգերը, Ռուսաստանի հետ կապերը և աբխազական երկաթուղու հնարավոր վերագործարկումը: 5TV-ում ապրիլին այս ճանապարհը ներկայացվել է որպես առևտրի և տարանցման այլընտրանքային ուղղություն: Նույն թեմայի շրջանակում մի մասը կասկածում է, թե TRIPP-ը կփոխարինի արդեն գործող տնտեսական կապերին, մյուսները քննադատում են Հայաստանի երկաթուղու ռուսական կոնցեսիոն կառավարումը:

Ռուսաստանի հարաբերություններն Ադրբեջանի, Թուրքիայի, ԱՄՆ-ի, ԵՄ-ի և Վրաստանի հետ նույնպես դիտարկում են հիմնականում Հայաստանի անվտանգային ընտրության համատեքստում: Բաքվի հետ Մոսկվայի գործարքները որոշ դեպքերում խիստ քննադատության են արժանանում, իսկ ռուս-թուրքական համագործակցությունը մեկնաբանվում է որպես Հայաստանի շահերը շրջանցելու հնարավոր ռիսկ: Այս հարցերում ռուսական ազդեցության ճանաչումը չի վերացնում նրա քաղաքականության նկատմամբ վերապահումները:

2.4. Թուրքիայի ընկալումը

Թուրքիան ընդդիմադիր խմբի առավել միանշանակ բացասական գնահատված դերակատարն է: Հայ-ադրբեջանական կարգավորման մեջ նրա դերի վերաբերյալ 181 գնահատականից 171-ը՝ մոտ 94%-ը, բացասական են: Հայաստանի

նկատմամբ Թուրքիայի քաղաքականության դեպքում բացասականները կազմում են շուրջ 87%: Այս պատկերը կարևոր հակադրություն է իշխանամետ խմբի հետ, որտեղ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը հաճախ դիտարկում են որպես տնտեսական և հաղորդակցական հնարավորություն՝ որոշակի վերապահումներով:

Խաղաղության գործընթաց. Թուրքիային անկախ միջնորդ չեն համարում
168.am-ի և 5TV-ի քննարկումներում բանախոսները պնդում են, որ Անկարան Հայաստանի հետ հարաբերություններում առաջնորդվում է Ադրբեջանի առաջնահերթություններով: Սահմանի բացման, դիվանագիտական կապերի հաստատման և հաղորդակցությունների ապաշրջափակման խոստումներին հակադրում են շարունակվող փակ սահմանը, Սահմանադրության փոփոխության վերաբերյալ ադրբեջանական պահանջները և Թուրքիայի աջակցությունն Ադրբեջանին: Այս խոսույթում հայ-թուրքական կարգավորման ձգձգումը պարզապես դիվանագիտական անհաջողություն չէ. այն ներկայացվում է որպես Հայաստանի նկատմամբ ճնշման և նոր զիջումներ ստանալու միջոց:

Բանախոսները հաճախ են դիմում նաև պատմական հիշողությանը՝ Հայոց ցեղասպանությանը, Հայաստանի շրջափակմանը և Լեռնային Ղարաբաղի պատերազմում Թուրքիայի դերակատարությանը: Այս համատեքստում «խաղաղություն» բառը երբեմն դառնում է վեճի առարկա. ընդդիմադիր խմբի մի շարք ներկայացուցիչներ համոզված են, որ հարաբերությունների բնականոնացումը չի կարող կառուցվել անցյալի և ընթացիկ սպառնալիքների անտեսման վրա: Փորձագետներից մեկը պատմահրավական լրիվ այլ հիմքից է մոտենում խնդրին՝ պնդելով, որ Հայաստանի իրավական պահանջների և պատմական սահմանների հարցերը չեն կարող դուրս մնալ հարաբերությունների օրակարգից: Դա խմբում առկա ավելի կոշտ տարբերակներից է, որը ոչ բոլոր աղբյուրներին է բնորոշ:

Հայաստանի նկատմամբ քաղաքականություն. տնտեսական հնարավորությունների բացում, թե՞ նոր կախվածություն
TRIPP-ի վերաբերյալ քննադատությունը Թուրքիայի հանդեպ վերաբերմունքի բնական շարունակությունն է: 5TV-ի և 168.am-ի եթերում այն կապում են թուրք-ադրբեջանական աշխարհագրական կապի, Սյունիքի նկատմամբ հավակնությունների և «Մեծ Թուրանի» գաղափարի հետ: Իսկ 24News-ի որոշ բանախոսներ զգուշացնում են, որ Թուրքիայի հետ հաղորդակցությունների բացման խոստումները կարող են ուղեկցվել Հայաստանի կողմից քաղաքական նոր պարտավորություններ ստանձնելով՝ առանց համարժեք երաշխիքների: Այս գնահատականների հեղինակները չեն սահմանափակվում տնտեսական օգուտների մասին խոսելով, նրանք պահանջում են պատասխանել, թե ինչ պայմաններով է բացվելու սահմանը, և որքան ազատ է լինելու Հայաստանը իր հետագա որոշումներում:

Բայց պետք է տարբերակել թուրքական քաղաքականության նկատմամբ այս ընդգծված անվստահությունը և **բոլոր տնտեսական ու դիվանագիտական կապերը սկզբունքորեն մերժելը**: Առանձին անդրադարձներում քննարկում են առևտրի, տրանսպորտի կամ ապագայում հաշտեցման հնարավորությունները: Պարզապես դրանք չեն դիտարկվում որպես Թուրքիայի ներկա քաղաքականության դրական գնահատականի հիմք: Այստեղ խմբի հիմնական հարցը հետևյալն է՝ կարո՞ղ է Հայաստանը հարաբերությունները կարգավորել

առանց անվտանգության և քաղաքական ինքնուրույնության հաշվին նոր զիջումների:

2.5. Իրանի ընկալումը

Իրանն ընդդիմադիր խմբի առավել դրական ներկայացվող հարևաններից է: Հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում Իրանի դերի գնահատականների մոտ 59%-ը, իսկ Հայաստանի նկատմամբ նրա քաղաքականության շուրջ 53%-ը դրական է: Բացասական գնահատականները երկու դեպքում էլ շատ քիչ են: Սակայն Իրանի նկատմամբ այս վերաբերմունքը ավելի ճիշտ է հասկանալ որպես **Հայաստանի հարավային սահմանի և տարածաշրջանային հավասարակշռության պաշտպանության շահի կարևորում**, ոչ թե Թեհրանի բոլոր քայլերի անվերապահ աջակցություն:

Հարավային սահմանը և Սյունիքի անվտանգությունը
24News-ի ու 168.am-ի քննարկումներում Իրանի կոշտ հայտարարությունները տարածաշրջանի սահմանները չփոխելու վերաբերյալ համարում են Ադրբեջանին և Թուրքիային զսպող գործոն: Փորձագետները հիշեցնում են, որ Հայաստանի հետ ցամաքային կապը Իրանի համար նույնպես կարևոր ռազմավարական շահ է: Այդ համընկնումը նրանց հիմք է տալիս պնդելու, որ Հայաստանը պետք է ավելի ակտիվ օգտագործի իրանական ուղղությունը՝ հատկապես Սյունիքի անվտանգության և տարածաշրջանային հաղորդակցությունների պայմանների շուրջ բանակցելիս:

Իրանը կարևորում են նաև որպես էներգետիկ, տրանսպորտային ու տնտեսական գործընկեր: Խմբի որոշ ներկայացուցիչներ կարծում են, որ այդ հարաբերություններին բավարար ուշադրություն չդարձնելը Հայաստանը դարձնում է ավելի խոցելի ԱՄՆ-Իրան հակադրության և թուրք-ադրբեջանական ճնշումների պայմաններում: Միաժամանակ, մեկ այլ փորձագիտական մոտեցման մեջ Իրանի հնարավոր դաշնակցային դերը կապվում է նրա ներքին քաղաքական ապագայի հետ, իսկ Թեհրանի որոշ միջազգային քվեարկություններ ուղղակի քննադատության են արժանանում: Ուստի դրական ընդհանուր պատկերը չի վերացնում իրանական քաղաքականության նկատմամբ առանձին վերապահումները:

Իրանը և TRIPP-ը՝ խմբերի հակադրության երկրորդ առանցքը
TRIPP-ի գնահատման մեջ Իրանի գործոնը շատ հաճախ որոշիչ է դառնում: Իշխանամետ խմբում նախագծի կողմնակիցները շեշտում են, որ Հայաստանի իրավազորությամբ հաղորդակցությունների բացումը կարող է համատեղելի լինել Իրանի շահերի հետ: Ընդդիմադիր խմբի բազմաթիվ քննարկումներում, ընդհակառակը, հարցնում են՝ արդյո՞ք Սյունիքում ամերիկյան երկարաժամկետ ներկայությունը Թեհրանը չի ընկալի որպես իրեն ուղղված սպառնալիք: 24News-ի մայիսյան և 5TV-ի հունիսյան նյութերում սա նախագծի դեմ հիմնական փաստարկներից է:

Այսպիսով, Իրանի նկատմամբ դրական վերաբերմունքը որոշակիորեն **միավորում է երկու հակադիր խմբերը**, բայց տարբեր եզրակացությունների է հանգեցնում TRIPP-ի և Հայաստանի արևմտյան գործընկերության հարցում: Մի կողմը փորձում է համատեղելի դարձնել ամերիկյան ու իրանական հնարավորությունները, մյուսը դրանց միջև տեսնում է վտանգավոր հակադրություն:

2.6. Վրաստանի ընկալումը

Վրաստանի նկատմամբ ընդդիմադիր խմբի խոսույթը շատ ավելի զուսպ է: Հայաստանի նկատմամբ Վրաստանի քաղաքականության մասին 56 անդրադարձից 41-ը չեզոք են, իսկ հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում Վրաստանի դերին վերաբերող անդրադարձները ընդամենը չորսն են: Հետևաբար այստեղ հնարավոր չէ խոսել կայուն, արտահայտված դրական կամ բացասական դիրքորոշման մասին:

Վրաստանին հիմնականում համարում են անհրաժեշտ հարևան և տարանցիկ գործընկեր՝ Ռուսաստանի, ՍԱՀ ծովի և արտաքին շուկաների հետ հաղորդակցություններն ապահովելու համար: 5TV-ի ապրիլյան քննարկումներում, օրինակ, Աբխազական երկաթուղու հնարավոր վերագործարկումը ներկայացվում է որպես տարածաշրջանային առևտրի այլընտրանքային հնարավորություն: 168.am-ի նյութերում ևս շեշտվում է վրացական ուղղության գործնական կարևորությունը: Միաժամանակ Վրաստանի եվրոպական ինտեգրման դժվարությունները որոշ բանախոսներ օգտագործում են որպես Հայաստանի արտաքին քաղաքական ընտրության ռիսկերը մեկնաբանելու օրինակ:

Այս ուղղությամբ ընդդիմադիր և իշխանամետ խմբերի միջև **տարաձայնությունները ավելի փոքր են**, քան ԱՄՆ-ի, ԵՄ-ի կամ Թուրքիայի հարցերում: Վրաստանի կարևորությունը ճանաչում են տարբեր դիրքերից, իսկ հիմնական վեճը վերաբերում է Հայաստանի տարանցիկ և տարածաշրջանային կապերի զարգացման նախընտրելի ճանապարհներին:

Ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցներն ընդգծել են Վրաստանի ներքաղաքական իրավիճակի գնահատականների տարբերությունները հայկական տեղեկատվական դաշտի տարբեր հատվածներում:

Ընդդիմադիր աղբյուրներում Թբիլիսիի արտաքին քաղաքականությունը ներկայացվել է որպես գործընկերների, մասնավորապես՝ Ռուսաստանի նկատմամբ հավասարակշռված, անկախ և ազգային ինքնիշխանության վրա հիմնված մոտեցման օրինակ, ինչին, ըստ այդ գնահատականների, պաշտոնական Երևանը չի կարողացել կամ չի ցանկացել հասնել:

Պայմանականորեն չեզոք հատվածում կարևորվել է Վրաստան-ԵՄ և Հայաստան-ԵՄ հարաբերությունների զարգացման համաժամանակեցումը: Իսկ իշխանամետ հատվածում ակնարկներ են հնչել Թբիլիսիի և Արևմուտքի միջև փոխհամաձայնությունը վերականգնելու ուղղությամբ հայկական դիվանագիտության ջանքերի մասին:

Ամփոփում

Պայմանականորեն ընդդիմադիր խմբում միջազգային դերակատարներին առավել հաճախ գնահատում են այն հարցով, թե **ինչ իրական երաշխիքներ են նրանք տալիս Հայաստանին և ինչ քաղաքական գին ունի նրանց հետ համագործակցությունը**: TRIPP-ի քննադատությունը, ԵՄ տնտեսական խոստումների նկատմամբ անվստահությունը և Թուրքիայի քաղաքականության բացասական ընկալումը այդ մոտեցման ամենահստակ արտահայտություններն են: Իշխանամետ խմբում որպես նոր հնարավորություն ներկայացվող

նախաձեռնությունները այստեղ հաճախ դիտարկում են որպես չպարզված անվտանգային պարտավորություններ կամ Հայաստանի նկատմամբ լրացուցիչ ազդեցության միջոցներ:

3. Պայմանականորեն չեզոք լրատվամիջոցների և փորձագետների թեմատիկ վերլուծություն

Պայմանականորեն չեզոք խմբի խոսույթը բնավ անտարբեր կամ բոլոր հարցերում հավասարակշռված չէ: ԱՄՆ-ի ու ԵՄ-ի հետ համագործակցությանը հաճախ աջակցում են, Ռուսաստանի անվտանգային քաղաքականությունը՝ հիմնականում քննադատում, իսկ Թուրքիայի հետ հարաբերությունների հարցում զգուշավոր են: Տարբերությունը առաջին հերթին քննարկման բնույթն է. «Ազատությունը» ու Factor TV-ն ներկայացնում են հակադիր տեսակետներ, իսկ փորձագետների մի մասը նույնիսկ ավելի վճռական է պաշտպանում կառավարության արտաքին քաղաքական որոշումները, մյուսները՝ կասկածի տակ դնում դրանց հիմնավորումները: Այս պատճառով խմբի նախապես սահմանված «չեզոք» բնութագրումը պետք չէ շփոթել մշտադիտարկման ընթացքում արտահայտված գնահատականների հետ:

3.1. ԱՄՆ. գործընկերության աջակցություն, բայց ոչ անվերապահ վստահություն

Խաղաղության միջնորդություն և TRIPP
ԱՄՆ-ի միջնորդությանը և Հայաստանի հետ հարաբերությունների խորացմանը խմբում ավելի շատ աջակցում են, քան հակադրվում. հայ-ադրբեջանական կարգավորման հարցում գնահատականների 63%-ը, իսկ Հայաստանի նկատմամբ ԱՄՆ քաղաքականության դեպքում՝ 70%-ը դրական է: Խմբի փորձագետների ու լրատվամիջոցների բանախոսների մի մասը Վաշինգտոնի ակտիվությունը համարում է Ռուսաստանի նախկին միջնորդական մենաշնորհից դուրս գալու հնարավորություն: Սակայն ուրիշները հարցնում են՝ ամերիկյան մասնակցությունը որքանո՞վ է Հայաստանի շահերին ծառայելու, և ի՞նչ կմնա այդ համագործակցությունից, եթե Վաշինգտոնի առաջնահերթությունները փոխվեն:

TRIPP-ի շուրջ հենց այս հակադրությունն է առավել հետաքրքիր: Դրական գնահատականները կազմում են 53%, իսկ մոտ 40%-ը չեզոք է: Դրա կողմնակիցներն այն դիտարկում են որպես ճանապարհների ապաշրջափակման, ներդրումների ներգրավման և հայկական վերահսկողությունը պահպանելու հնարավորություն: Ընդ որում, փորձագետներից մեկը պնդում է, որ ծրագիրը Վաշինգտոնում երկկուսակցական աջակցություն ունի, բայց անմիջապես ավելացնում է՝ **«Առանց հայ-թուրքական սահմանի բացման TRIPP-ի ամբողջական արդյունավետությունը վտանգված է»**: Այսինքն՝ նախագծին աջակցելը դեռ չի նշանակում հավատալ, թե դրա տնտեսական արդյունքը երաշխավորված է:

Խմբի ներսում կա նաև շատ ավելի կոշտ քննադատություն: Մեկ այլ փորձագետի համոզմամբ՝ **«Թրամփի ուղին համաձայնություն է ավելի շատ ԱՄՆ-ի և Ադրբեջանի, այլ ոչ թե ԱՄՆ-ի և Հայաստանի միջև»**: Նա նախագծի՝ որպես

խաղաղության երաշխիքի ներկայացումը համարում է նախընտրական քարոզչության մաս: Factor TV-ի հուլիսյան քննարկումներում ևս, բացի նախագծի առավելությունները ներկայացնող բանախոսներից, հնչել է տեսակետ, որ այն կարող է ծառայել Ռուսաստանին ու Իրանին Հարավային Կովկասից դուրս մղելու նպատակին: Դրանք առանձին քննադատական գնահատականներ են, ոչ թե խմբի ընդհանուր եզրակացություն:

«Ազատությունը» հուլիսին այս տարաձայնության կարևոր մանրամասներ է ներկայացնում՝ հայկական մաքսային և սահմանային իրավազորության վերաբերյալ ԱՄՆ պարզաբանումները, Ադրբեջանի կողմից «Զանգեզուրի միջանցք» անվանման շարունակական կիրառումը և Իրանի մտահոգությունները: Այսպիսով, խմբում TRIPP-ի շուրջ բանավեճը վերաբերում է ոչ միայն ճանապարհին, այլև դրա նկատմամբ վերահսկողությանը, շահառուներին ու անվտանգային հետևանքներին:

Իրանի նկատմամբ քաղաքականություն և ընտրական ազդեցություն
ԱՄՆ-ի նկատմամբ ընդհանուր դրական վերաբերմունքը չի տարածվում նրա իրանական քաղաքականության վրա: Այդ թեմայով դրական գնահատականները հազվադեպ են, հիմնականում գերակշռում են չեզոք և բացասական անդրադարձները: Խմբի փորձագետներն ու լրատվամիջոցների բանախոսները քննադատում են ռազմական էսկալացիան և պատժամիջոցները՝ վախենալով, որ դրանք կվնասեն Հայաստանի հարավային հաղորդակցություններին և էներգետիկ հնարավորություններին:

ԱՄՆ-ի հնարավոր ընտրական ազդեցության թեման ևս միանշանակ չէ. դրական գնահատականները 21-ն են, բացասականները՝ 10-ը, չեզոքները՝ 22-ը: «Ազատությունում» ամերիկյան քաղաքական շփումները մի մեկնաբանությամբ դիտվում են որպես Հայաստանի ժողովրդավարական ու անվտանգային գործընկերության ամրապնդում, մյուսով՝ գործող իշխանություններին աջակցելու փորձ: Խմբի համար բնորոշ է հենց այս տարակարծության տեսանելիությունը:

3.2. Եվրոպական միություն. աջակցություն եվրոպական ուղղությանը և պահանջկոտություն դրա արդյունքների նկատմամբ

Հայաստանի հետ համագործակցություն և ՀԵՄԱ
Հայաստանի նկատմամբ ԵՄ քաղաքականության մասին գնահատականների 65%-ը դրական է: Եվրաինտեգրումը, տնտեսական օգնությունը, վիզաների ազատականացումը և եվրոպական շուկաների հասանելիությունը շատ խմբի փորձագետներ ու լրատվամիջոցների բանախոսներ տեսնում են որպես Հայաստանի ինքնուրույնությունը մեծացնելու հնարավորություն: Որոշ փորձագետներ նույնիսկ դժգոհում են, որ կառավարությունը չափազանց դանդաղ է շարժվում դեպի Եվրոպա: Այս քննադատությունը դժվար է անվանել հակաեվրոպական. նրանք պարզապես պահանջում են ավելի հստակ քայլեր և շոշափելի արդյունքներ:

ՀԵՄԱ-ի գնահատականն առավել հստակ է. 40 անդրադարձից 31-ը դրական են: Փորձագետներից մեկը դիտորդական առաքելությունը նույնիսկ բնորոշում է որպես Հայաստանի պետականության պահպանման համար կարևորագույն **«իրաշք»**

գործիքներից մեկը: Այլ քննարկումներում շեշտում են, որ քաղաքացիական դիտորդների ներկայությունն օգնում է զսպել սահմանային լարվածությունը, բայց չի կարող փոխարինել ռազմական պաշտպանությանը: Այդ երկու պնդումները պարտադիր չէ, որ հակասեն միմյանց:

Եվրոպական աջակցությո՞ւն, թե՞ ընտրական շահ
ԵՄ-ի նկատմամբ աջակցությունը չի վերացնում նրա հասցեին դժգոհությունը: «Ազատության» հուլիսյան նյութերում տնտեսվարողները նշում են, որ եվրոպական շուկա մուտքը դեռ դժվար է՝ ստանդարտների և վիզաների պատճառով, իսկ ընդդիմադիր բանախոսները ԵՄ պաշտոնյաներին մեղադրում են Հայաստանում իշխանության գործողությունների նկատմամբ ընտրողական վերաբերմունքի համար: Factor TV-ում ևս դրական պատկերին զուգահեռ ներկայացվում են Եվրամիության հնարավորությունների և Ադրբեջանի հետ նրա էներգետիկ շահերի վերաբերյալ վերապահումներ:

Ընտրությունների վրա ԵՄ ազդեցության գնահատականներն արդեն զգալիորեն բաժանված են՝ 39 դրական և 18 բացասական: Մի մասն աջակցությունը կապում է ընտրությունների պաշտպանությանը և արտաքին ապատեղեկատվության դեմ պայքարին, մյուսը կասկածում է, որ այդ նախաձեռնությունները կարող են քաղաքական առավելություն տալ գործող իշխանություններին: Այս տարակարծությունը կարևոր է. ԵՄ-ի հետ մերձեցման հավանությունը չի նշանակում եվրոպական կառույցների բոլոր ներքաղաքական քայլերի հավանություն:

3.3. Ռուսաստան. խիստ քննադատություն՝ հետագա հարաբերությունների մասին տարբեր պատկերացումներով

Անվտանգային պարտավորություններ և քաղաքական ճնշում
Չեզոք խմբում Ռուսաստանի նկատմամբ վերաբերմունքը շատ ավելի բացասական է, քան ենթադրում է «չեզոք» անվանումը: Հայաստանի անվտանգության ապահովման գործում նրա դերի գնահատականների 86%-ը, իսկ Հայաստանի նկատմամբ քաղաքականության դեպքում՝ 80%-ը բացասական է: Լրատվամիջոցների և փորձագետների մեծ մասը քննադատում է Ռուսաստանի ու ՀԱՊԿ-ի վարքը Հայաստանի դեմ հարձակումների և Արցախի հայության տեղահանության համատեքստում:

«Ազատությունն» անդրադառնում է նաև Ռուսաստանի տնտեսական լծակներին՝ հայկական ապրանքների ներկրման սահմանափակումներին, Վերին Լարսի դժվարություններին և գազի գնի շուրջ սպառնալիքներին: Հուլիսին առանձին ուշադրություն է դարձվում երկաթուղու ռուսական կոնցեսիոն կառավարմանը: Փորձագետներից մեկը դա համարում է տրանսպորտային ներդրումները խոչընդոտող գործոն: Մյուսը Ռուսաստանի տարածաշրջանային քաղաքականությունը քննադատելով հանդերձ զգուշացնում է, որ առանց իրական այլընտրանքների՝ Ռուսաստանից լիակատար հեռացումը կարող է Հայաստանը դարձնել այլ ուժերի հակամարտության դաշտ:

Այսպիսով, Ռուսաստանի քաղաքականության քննադատությունը գրեթե ընդհանուր է, բայց **ինչպե՞ս նվազեցնել կախվածությունը** հարցի

պատասխանները տարբեր են: Ոմանք պահանջում են արագ խզել անվտանգային ու տնտեսական կապերը, մյուսները կողմ են ավելի հաշվարկված անցման:

Ընտրություններ և տարածաշրջանային հաղորդակցություններ
Ռուսաստանի՝ ՀՀ ԱԺ ընտրությունների վրա ազդեցության վերաբերյալ գնահատականների 88%-ը բացասական է: Խմբի փորձագետներն ու լրատվամիջոցների բանախոսները քննարկում են ռուսական տեղեկատվական ազդեցությունը, ներքաղաքական ուժերին հնարավոր աջակցությունը և քարոզչական ճնշումները: Սակայն նույն լրատվամիջոցներում հնչում են նաև մեղադրանքների հիմնավորվածությունն ու դրանց քաղաքական նպատակներով օգտագործումը վիճարկող տեսակետներ:

Տրանսպորտային կապերի հարցում ևս քննադատությունն ուղղված է հատկապես երկաթուղիների ռուսական կառավարմանը և նոր նախագծերը վերահսկելու ձգտմանը: Այստեղ Ռուսաստանի ազդեցության նվազեցումը կարող է ընկալվել դրական, բայց դրա գործնական գինը՝ գործող հաղորդակցություններից ու շուկաներից կախվածությունը, շարունակում է քննարկման առարկա մնալ:

3.4. Թուրքիա. սահմանի բացման շահն ընդունում են, բայց Անկարայի խոստումներին չեն վստահում

Հայաստանի նկատմամբ Թուրքիայի քաղաքականության վերաբերյալ առավել շատ են չեզոք գնահատականները՝ 51%, իսկ բացասականները կազմում են 42%: Հայ-ադրբեջանական կարգավորման մեջ Թուրքիայի դերն ավելի քննադատաբար է գնահատվում՝ 78 անդրադարձից 45-ը բացասական: Խմբի փորձագետներն ու լրատվամիջոցների բանախոսները դժգոհում են, որ Անկարան սահմանը բացելու հարցը շարունակում է կապել Բաքվի պահանջների հետ:

«Ազատության» հուլիսյան նյութերում հարաբերությունների կարգավորումը բնութագրվում է որպես **«տեղում դոփող»** գործընթաց. նախկինում համաձայնեցված քայլերը չեն իրականացվել: Բայց նույն նյութերում ներկայացվում են նաև Անիի հուշարձանների պահպանման աշխատանքները, գործարար շփումները և երկաթուղու վերականգնման քննարկումները: Հնչում է նույնիսկ շատ մարդկային հակասություն. որոշ բեռնափոխադրողներ Թուրքիային քաղաքականապես չեն վստահում, բայց սահմանը բացելու տնտեսական օգուտը չեն ժխտում:

Սոցցանցերում փորձագետների դիրքորոշումները նույնպես տարբեր են: Ոմանք սահմանի բացումը համարում են Հայաստանի տնտեսական մեկուսացումը նվազեցնելու միջոց, մյուսները զգուշացնում են, որ առանց նախապայմանների վերացման գործընթացը կարող է վերածվել միակողմանի զիջումների: Հետևաբար այստեղ ավելի շուտ կա **կարգավորման ցանկություն՝ զուգորդված դրա իրագործման նկատմամբ անվստահությամբ**:

3.5. Իրան. կարևոր գործընկեր, որի շուրջ պատերազմի ռիսկերը չեն անտեսվում

Հայաստանի նկատմամբ Իրանի քաղաքականության մասին դրական և չեզոք գնահատականները գրեթե հավասար են՝ համապատասխանաբար 52 և 49, իսկ բացասականներն ընդամենը 4-ն են: Խմբի փորձագետները կարևորում են Իրանի

հետ սահմանը, էներգետիկ համագործակցությունը և նրա՝ որպես հարավային հաղորդակցության ուղու նշանակությունը:

«Ազատության» հուլիսյան նյութերում իրանական գազի մատակարարումների ընդլայնման առաջարկը ներկայացվում է որպես Հայաստանի էներգետիկ կախվածությունը նվազեցնելու **«շատ լավ նորություն»**: Միաժամանակ լրագրողները հիշեցնում են, որ Հայաստան-Իրան գազատարի հայկական հատվածը վերահսկվում է ռուսական ընկերության կողմից: Factor TV-ի քննարկումներում ևս Իրանը հանդես է գալիս որպես կարևոր հարևան, բայց ամերիկա-իրանական հակամարտության սրումը համարում են և՛ էներգետիկ ծրագրերի, և՛ TRIPP-ի իրականացման համար ռիսկ:

Այսպիսով, Իրանի նկատմամբ հիմնականում դրական վերաբերմունքը չի վերածվում նրա բոլոր գործողությունների արդարացման. կարևոր է առաջին հերթին, թե այդ զարգացումներն ինչպես կանդրադառնան Հայաստանի անվտանգության և տնտեսության վրա:

Ֆոկուս-խմբային քննարկումների ընթացքում հնչած լրացուցիչ գնահատականների համաձայն՝ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին պայմանականորեն չեզոք լրատվամիջոցներում և համեմատաբար չեզոք դիրքավորում ունեցող հասարակական կարծիքի առաջնորդների սոցիալական ցանցերի էջերում ավելի հաճախ, քան հայկական տեղեկատվական դաշտի մյուս հատվածներում, քննադատության են ենթարկվել TRIPP-ի կառուցման անթույլատրելիության վերաբերյալ Իրանի պաշտոնյաների հայտարարությունները:

Ընդդիմադիր հատվածում, ընդհակառակը, այդ հայտարարություններն օգտագործվել են որպես առիթ՝ կասկածի տակ դնելու «Թրամփի ուղու» նպատակահարմարությունն ու իրագործելիությունը: Մինչդեռ իշխանամետ հատվածում գերակշռել է այս հարցում Թեհրանի հետ համաձայնության հասնելու հնարավորության վերաբերյալ լավատեսությունը:

3.6. Վրաստան. անհրաժեշտ գործընկեր՝ գործնական դժգոհություններով

Վրաստանի թեման համեմատաբար քիչ է քննարկվում: Հայաստանի նկատմամբ նրա քաղաքականության 70 անդրադարձից 41-ը չեզոք են, 20-ը՝ դրական: Վրաստանը հիմնականում դիտարկվում է որպես դեպի արտաքին շուկաներ հայկական բեռների տարանցման ուղի, ինչպես նաև տարածաշրջանային հաղորդակցությունների ցանկալի գործընկեր:

Սակայն այս գործնական գնահատականը բացառում է իդեալականացումը: «Ազատության» հուլիսյան նյութերում հայկական բեռնափոխադրողները դժգոհում են վրացական անցակետերում ձգձգվող ստուգումներից և անհավասար մրցակցությունից: Փորձագետներից մեկի կարծիքով էլ Վրաստանով տարանցման արդեն գործող հնարավորությունները դժվարացնում են նոր երթուղիների տնտեսական շահավետության գնահատումը: Այստեղ քաղաքական համակրանքը երկրորդական է. հիմնական հարցը Հայաստանի համար հաղորդակցությունների հուսալիությունն ու իրական գինն է:

Ինչպես ցույց են տվել ֆոկուս-խմբային քննարկումները, սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին հայկական տեղեկատվական դաշտը, թեև սահմանափակ ծավալով, անդրադարձել է Ադրբեջանի և Վրաստանի միջև մշակութային ժառանգության հարցերի շուրջ առաջացած հակասություններին:

Այս թեման, որպես կանոն, լուսաբանվել է սեպտեմբերի 11-12-ին Ադրբեջանի իշխանությունների կազմակերպած՝ օտարերկրյա դիվանագետների Արցախ այցելությունից հետո Երևանի և Բաքվի միջև առաջացած լարվածության համատեքստում:

Տեղի ունեցածը ներկայացվել է որպես տարածաշրջանում Ադրբեջանի գերիշխանություն հաստատելու անընդունելի միտում, այդ թվում՝ պատմության մեկնաբանման և պատմամշակութային հուշարձանների պատկանելության հարցերում:

Ամփոփում

Պայմանականորեն չեզոք խմբում հստակ աջակցում են ամերիկյան և եվրոպական գործընկերության բազմաթիվ ուղղությունների և խիստ քննադատում Ռուսաստանի անվտանգային քաղաքականությունը: Բայց անգամ նույն ծրագրի մասին կարող են հնչել սկզբունքորեն տարբեր գնահատականներ. TRIPP-ը՝ ինքնիշխանության հնարավորություն կամ արտաքին ուժերի գործարք, ԵՄ աջակցությունը՝ անվտանգության ու զարգացման հենարան կամ քաղաքական ազդեցության միջոց: **Խմբի առանձնահատկությունը ոչ թե անտարբերությունն է, այլ փաստարկների և հակադիր դիրքորոշումների համատեղ ներկայությունը**:

ՄԱՍ Գ.
Լրատվամիջոցների դիրքորոշումների թեմատիկ շեշտադրումների փոփոխությունները 2026 թվականի ապրիլ-հուլիս ամիսներին

Մշտադիտարկված նյութերի քանակը դիտարկման ողջ ժամանակահատվածում համեմատաբար կայուն է եղել՝ մայիսին արձանագրված որոշակի աճով, որից հետո վերադարձել է նախորդ ամիսներին մոտ մակարդակի:

Մշտադիտարկված նյութերի քանակը

Լրատվամիջոցը	Ամիսը				Ընդամենը
	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	
1in.am	48	39	43	30	160
24News.am	39	31	29	24	123
168.am	37	38	33	24	132
Aazatutyun.am (Ազատություն)	87	109	75	62	333
Factor.am	34	33	33	31	131
FreeNews.am	116	114	128	123	481
1TV.am (Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք (Հ1))	92	167	117	104	480
5TV.am (5-րդ ալիք)	126	149	118	119	512
Ընդամենը	**579**	**680**	**576**	**517**	**2352**

Ամսական մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ լրատվամիջոցների երեք խմբերի հիմնական դիրքորոշումները դիտարկման ժամանակահատվածում մեծամասամբ պահպանվել են: Այդուհանդերձ, որոշ թեմաներում նկատվում են գնահատականների, լուսաբանման ինտենսիվության և ներկայացվող փաստարկների ուշագրավ փոփոխություններ:

1. Թուրքիայի նկատմամբ քննադատության որոշակի մեղմացում

Թուրքիայի՝ Հայաստանի նկատմամբ քաղաքականության բացասական գնահատականների մասնաբաժինը իշխանամետ լրատվամիջոցներում ապրիլյան 32%-ից հունիսին նվազել է մինչև 11%, իսկ հուլիսին կազմել 18%: Չեզոք խմբում այն նվազել է 67%-ից մինչև 47%: Ընդդիմադիր խմբում բացասական գնահատականները շարունակում են գերակշռել՝ ապրիլյան 97%-ի դիմաց հուլիսին կազմելով 81%:

Այս փոփոխությունները մասամբ պայմանավորված են նաև թեմայի նկատմամբ ուշադրության նվազմամբ: Մասնավորապես, ընդդիմադիր խմբում անդրադարձների թիվը 75-ից նվազել է մինչև 43, իսկ չեզոք խմբում՝ 27-ից մինչև 17: Վերջինիս դեպքում փոփոխության զգալի մասը կապված է «Ազատության»

լուսաբանման կրճատման հետ, մինչդեռ Factor TV-ում բացասական գնահատականների թիվը գրեթե չի փոխվել:

Միաժամանակ նկատելի է նաև բովանդակային շեշտադրումների փոփոխություն: Հ1-ի մայիս-հունիսյան նյութերում ավելի մեծ տեղ են զբաղեցրել Գյումրի-Կարս երկաթուղու, Անիի կամրջի վերականգնման, սահմանի բացման և գործարար համագործակցության հնարավորությունները: «Ազատությունը» հուլիսին, հակառակը, ընդգծել է, որ հարաբերությունների կարգավորումը դեռևս չի վերածվել սահմանի բացման գործնական որոշման:

Այսպիսով, **Թուրքիայի նկատմամբ գնահատականների որոշակի մեղմացումը չի կարելի ամբողջությամբ մեկնաբանել որպես դիրքորոշման փոփոխություն**: Դրան նպաստել են ինչպես թեմատիկ շեշտադրումները, այնպես էլ լուսաբանման ծավալի և կառուցվածքի փոփոխությունները:

2. ԵՄ-ի նկատմամբ դրական գնահատականների աճ

Հայաստանի նկատմամբ ԵՄ քաղաքականության դրական գնահատականների մասնաբաժինը իշխանամետ խմբում ապրիլյան 80%-ից հուլիսին հասել է 90%-ի, իսկ չեզոք խմբում՝ 51%-ից 72%-ի: Ընդդիմադիր խմբում, հակառակը, ամբողջ ժամանակահատվածում պահպանվել է գերազանցապես բացասական գնահատականների պատկերը:

Հատկապես ուշագրավ է չեզոք խմբի փոփոխությունը, քանի որ դրական գնահատականների աճ նկատվում է և՛ «Ազատությունում», և՛ Factor TV-ում: Հուլիսյան լուսաբանման մեջ ավելի մեծ տեղ են զբաղեցնում ԵՄ տնտեսական աջակցությունը, արտահանման հնարավորությունները և ռուսական շուկայից կախվածության նվազեցումը:

Միաժամանակ «Ազատությունը» ներկայացրել է եվրոպական շուկա մուտքի գործնական դժվարությունները, իսկ Factor TV-ում հնչել են նաև եվրոպական քաղաքականության նկատմամբ քննադատական գնահատականներ:

Հետևաբար նկատվում է **ԵՄ-ի հետ համագործակցության տնտեսական հնարավորությունների նկատմամբ դրական վերաբերմունքի խորացում**, որը, սակայն, չի նշանակում չեզոք լրատվամիջոցների ընդհանուր քաղաքական դիրքավորման փոփոխություն:

3. Ռուսաստանի նկատմամբ քննադատության ուժեղացում

Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի քաղաքականության բացասական գնահատականների մասնաբաժինն իշխանամետ խմբում ապրիլյան 67%-ից հուլիսին հասել է 81%-ի, իսկ չեզոք խմբում՝ 73%-ից 90%-ի:

Այս փոփոխությունն ուղեկցվել է լուսաբանման բովանդակային շեշտադրումների զարգացմամբ: Եթե Ռուսաստանի անվտանգային պարտավորությունների չկատարման քննադատությունն առկա էր ամբողջ ժամանակահատվածում, ապա մայիս-հուլիս ամիսներին ավելի մեծ ուշադրություն է հատկացվել նաև տնտեսական ճնշումներին, հայկական ապրանքների ներմուծման

սահմանափակումներին, Վերին Լարսի խնդիրներին և Հայաստանի երկաթուղային ենթակառուցվածքների վերահսկողությանը:

Հ1-ի, FreeNews-ի և «Ազատության» նյութերում ռուսական տնտեսական սահմանափակումները հաճախ ներկայացվել են որպես Հայաստանի արտաքին քաղաքական դիվերսիֆիկացմանը հակազդելու միջոց:

Ընդդիմադիր լրատվամիջոցներում Ռուսաստանի նկատմամբ գնահատականները մնացել են ավելի բազմազան՝ գերազանցապես չեզոք ներկայացմամբ և անվտանգության ու տնտեսական հարաբերությունների պահպանման կարևորության շեշտադրմամբ:

4. TRIPP նախագծի շուրջ բևեռացման պահպանում

TRIPP-ի վերաբերյալ խմբերի հիմնական դիրքորոշումները էականորեն չեն փոխվել:

Իշխանամետ խմբում դրական գնահատականները շարունակել են գերակշռել՝ ապրիլին կազմելով 77%, հունիսին՝ 74%, հուլիսին՝ 63%: Ընդդիմադիր խմբում բացասական գնահատականները հունիսին հասել են 94%-ի, իսկ հուլիսին նվազել մինչև 63%՝ հիմնականում չեզոք անդրադարձների մասնաբաժնի աճի հաշվին:

Դիրքորոշումների հակադրությունը տեսանելի է նաև փաստարկներում: 1in.am-ի հունիսյան նյութերում TRIPP-ը ներկայացվել է որպես Հայաստանի ինքնիշխանությունն ամրապնդող և նոր տնտեսական հնարավորություններ ստեղծող նախագիծ: Մինչդեռ 5TV-ի հունիսյան հաղորդումներում այն նույնացվել է «Զանգեզուրի միջանցքի» և «Մեծ Թուրանի» գաղափարների հետ՝ որպես Հայաստանի համար անվտանգային սպառնալիք:

Չեզոք խմբում պահպանվել է նախագծի տնտեսական հնարավորությունների և դրա անվտանգային ու աշխարհաքաղաքական ռիսկերի համատեղ քննարկումը:

Այսպիսով, **փոփոխվել են քննարկումների ինտենսիվությունն ու առանձին շեշտադրումները, բայց TRIPP-ի վերաբերյալ հիմնական հակադիր մեկնաբանությունները պահպանվել են**:

5. Ռուսաստանի հնարավոր ընտրական ազդեցության լուսաբանման ակտիվացում

Ռուսաստանի՝ ՀՀ խորհրդարանական ընտրությունների վրա հնարավոր ազդեցության նկատմամբ ուշադրությունը իշխանամետ խմբում ապրիլյան 59 անդրադարձից մայիսին աճել է մինչև 90, հունիսին՝ 92, իսկ հուլիսին նվազել մինչև 50:

Հ1-ի և FreeNews-ի մայիս-հունիսյան նյութերում մեծ ուշադրություն է հատկացվել ռուսական տեղեկատվական ազդեցությանը, ընդդիմադիր ուժերին հնարավոր աջակցությանը և ընտրական գործընթացներին միջամտելու վերաբերյալ մեղադրանքներին:

Չեզոք խմբում թեմայի լուսաբանման ծավալն ավելի կայուն է եղել, սակայն այստեղ նույնպես բացասական գնահատականները գերակշռել են: Ընդդիմադիր խմբում առավել տարածված է եղել չեզոք լուսաբանումը, ինչպես նաև արևմտյան գործընկերների հնարավոր ընտրական ազդեցության վերաբերյալ քննադատությունը:

Այս տարբերությունն արտահայտում է ոչ միայն արտաքին դերակատարների նկատմամբ վերաբերմունքը, այլև **այն, թե որ արտաքին ազդեցությունն է տարբեր խմբերում առավել հաճախ ներկայացվել որպես Հայաստանի ընտրական գործընթացի սպառնալիք**:

6. Ընդհանուր եզրակացություն

2026 թվականի ապրիլ-հուլիս ամիսների ընթացքում լրատվամիջոցների հիմնական քաղաքական կողմնորոշումները համեմատաբար կայուն են մնացել, սակայն առանձին թեմաներում նկատվել են նշանակալի փոփոխություններ:

Առավել ուշագրավ են ԵՄ-ի նկատմամբ դրական գնահատականների աճը, Ռուսաստանի հանդեպ քննադատության ուժեղացումը և Թուրքիայի վերաբերյալ լուսաբանման որոշակի մեղմացումը: Միաժամանակ TRIPP-ի շուրջ հիմնական հակադիր մեկնաբանությունները պահպանվել են, իսկ Ռուսաստանի հնարավոր ընտրական ազդեցության թեման հատկապես ակտիվացել է մայիս-հունիս ամիսներին:

Ընդհանուր առմամբ, փոփոխությունները վերաբերում են **ոչ միայն գնահատականների դրական կամ բացասական բնույթին, այլև լրատվամիջոցների ուշադրության բաշխմանը և հիմնավորման համար օգտագործվող փաստարկներին**: Հետևաբար բոլոր դեպքերում չէ, որ գնահատականների տոկոսային փոփոխությունն արտահայտում է լրատվամիջոցի դիրքորոշման իրական փոփոխություն:

Հետազոտության մեթոդաբանությունը և ստացված ընդհանուր արդյունքները

Ա. Մշտադիտարկման քանակական ընդգրկումը

Ութ լրատվամիջոցների մշտադիտարկում

Մշտադիտարկվել են 2026 թ. մեթոդաբանական փաստաթղթով ընտրված ութ լրատվամիջոցների լրատվական և հասարակական-քաղաքական հաղորդումները: Ընտրության չափանիշներն են եղել քաղաքական դիրքավորումը, լսարանի ծավալը և ազդեցությունը, աշխարհագրական բաշխվածությունը և ընտրական թեմաների լուսաբանման ակտիվությունը: Ընտրանքը նպատակային է և չի ներկայացնում ամբողջ մեդիադաշտի վիճակագրական պատկերը:

Լրատվամիջոց	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Ընդամենը
5TV.am (5-րդ ալիք)	126	149	118	119	512
FreeNews.am	116	114	128	123	481
1TV.am (Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք (Հ1))	92	167	117	104	480
Azatutyun.am (Ազատություն)	87	109	75	62	333
1in.am	48	39	43	30	160
168.am	37	38	33	24	132
Factor.am	34	33	33	31	131
24News.am	39	31	29	24	123
Ընդամենը	**579**	**694**	**576**	**503**	**2352**

Ըստ մշտադիտարկման ամփոփիչ հաշվառման՝ չորս ամսվա ընթացքում գրանցվել է 2,352 թեմատիկ անդրադարձ, միջինում՝ ամսական 588: Ամենաբարձր քանակը գրանցվել է մայիսին՝ 694, ամենացածրը՝ հուլիսին՝ 503:

Տասնութ փորձագետների/ինֆլուենսերների հրապարակումների մշտադիտարկում

Չուգահեռ ուսումնասիրվել են 18 փորձագետների ֆեյսբուքյան հրապարակումները:

Փորձագետների թեմատիկ անդրադարձների թիվը 865 է: Մեդիա և փորձագիտական ուղղությունների հաշվառված ընդհանուր ցուցանիշների հանրագումարը 3,217 է:

Բ. Մշտադիտարկման մեթոդաբանական հիմքը

Ընտրանքի և դիտարկման միավորի սահմանումը
ՁԼՄ-ների մշտադիտարկման միավորներ են սահմանվել հեռուստատեսային նորությունների առանձին ռեպորտաժները՝ ներառյալ հաղորդավարի նախաբանը, և ամբողջական քաղաքական կամ բանավիճային հաղորդումները: Մշտադիտարկումից բացառվել են առևտրային ու սոցիալական գովազդները, հովանավորվող հրապարակումները, հայտարարությունները և հաղորդումների «վազող տողը»:

Փորձագետների դեպքում ուսումնասիրվել են ընտրված անձանց ֆեյսբուքյան հրապարակումները:

Քանակական հաշվառման ձևը
Հաշվառման աղյուսակներում նշված են թեմային անդրադարձների քանակները, իսկ թեմատիկ տողերի համար՝ նաև անդրադարձների բնույթը՝ դրական (+), բացասական (−) կամ չեզոք (0): Նույն նյութը կարող է առնչվել մեկից ավելի հարցերի:

Ֆոկուս-խմբային քննարկում
Մշտադիտարկման արդյունքները լրացնելու և արդիականացնելու նպատակով կազմակերպվել է ֆոկուս-խմբային քննարկում՝ միջազգային հարաբերությունների, տարածաշրջանային անվտանգության և մեդիա ոլորտի փորձագետների մասնակցությամբ: Քննարկումը հնարավորություն է տվել վերանայել և հստակեցնել արձանագրված միտումները՝ հաշվի առնելով տարածաշրջանային և միջազգային գործընթացների դինամիկան, ինչպես նաև լրացնել մշտադիտարկման արդյունքների որակական մեկնաբանությունները:

Լրատվամիջոցների և փորձագետների կողմնորոշումը կառավարության քաղաքականության նկատմամբ
Մշտադիտարկման արդյունքների համախմբման և համեմատության նպատակով լրատվամիջոցներն ու փորձագետները դասակարգվել են ըստ գործող կառավարության քաղաքականության նկատմամբ նրանց նախապես հայտնի կամ հրապարակայնորեն արտահայտված ընդհանուր դիրքավորման՝ կիրառելով նախապես սահմանված չափանիշներ: Առանձնացվել են երեք պայմանական խմբեր՝

- **Պայմանականորեն իշխանամետ ՁԼՄ-ներ և փորձագետներ/ինֆլուենսերներ**՝ կառավարության քաղաքականության նկատմամբ ընդհանուր առմամբ աջակցող դիրքավորմամբ:
- **Պայմանականորեն ընդդիմադիր ՁԼՄ-ներ և փորձագետներ/ինֆլուենսերներ**՝ կառավարության քաղաքականության նկատմամբ ընդհանուր առմամբ քննադատական դիրքավորմամբ:
- **Պայմանականորեն չեզոք ՁԼՄ-ներ և փորձագետներ/ինֆլուենսերներ**՝ իրենց չեզոք դիրքավորող կամ նախնական դասակարգման չափանիշներով հետևողականորեն չաջակցող կամ քննադատական դիրքավորում չունեցող:

Այս դասակարգումն անկախ է մշտադիտարկման ընթացքում արձանագրված գնահատականներից: Հետևաբար, որևէ խմբին պատկանելությունը չի նշանակում, որ դրա ներկայացուցիչները դիտարկման

ամբողջ ժամանակահատվածում արտահայտել են նույնօրինակ դիրքորոշումներ: Օրինակ՝ պայմանականորեն չեզոք փորձագետը որոշ դեպքերում կարող է աջակցել կառավարության արտաքին քաղաքական որոշումներին, իսկ պայմանականորեն իշխանամետ փորձագետը՝ քննադատել դրանք:

Դասակարգումը չի ենթադրում կուսակցական պատկանելություն, քաղաքական հայացքների ամբողջական նույնություն կամ կառավարության բոլոր որոշումների նկատմամբ միատեսակ վերաբերմունք: Այն ծառայում է որպես վերլուծական խմբավորման հիմք, իսկ մշտադիտարկման ընթացքում արտահայտված դիրքորոշումները դիտարկվում են որպես ուսումնասիրության ինքնուրույն արդյունք:

Ներկայացված վերլուծությունում երեք պայմանական խմբերն օգտագործվել են միջազգային դերակատարների նկատմամբ ընկալումներն ու գնահատականները համեմատելու, ինչպես նաև նախնական դիրքավորման և փաստացի արտահայտված տեսակետների ընդհանրություններն ու տարբերությունները բացահայտելու համար:

Լրատվամիջոցների խոսույթի հիմնական առանձնահատկությունները՝ ըստ պայմանական խմբերի

Պայմանականորեն իշխանամետ ՁԼՄ-ներ	
1in.am	Լրագրողների և հրավիրված բանախոսների խոսույթում հիմնականում դրական են ներկայացվում արևմտյան ինտեգրումը, TRIPP-ը և կառավարության արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացումը: Ռուսաստանի և ՀԱՊԿ-ի նկատմամբ քննադատական մոտեցումները նույնպես համընկնում են պաշտոնական քաղաքականության հետ:
FreeNews.am	Լրագրողների և բանախոսների գնահատականները հիմնականում համընկնում են պաշտոնական արտաքին քաղաքականության հետ՝ արևմտյան ինտեգրում, TRIPP, Ռուսաստանի հասցեին քննադատություն: Որոշ բանախոսներ կառավարության քաղաքականության համեմատ ավելի վճռական քայլեր են ակնկալում կամ անգամ՝ պահանջում:
1TV.am (Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք (Հ1))	Լրատվական նյութերի ընդհանուր շրջանակում դրական են ներկայացվում կառավարության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները: Հարցազրույցներում բարձրացվում են նաև ընդդիմադիր և հանրային մտահոգություններ, սակայն հարցադրումների քննադատական բնույթն ավելի շուտ թեման տարբեր կողմերից ներկայացնելու համար կիրառվող ցուցադրական հնարքի է նման:
Պայմանականորեն չեզոք ՁԼՄ-ներ	
Azatutyun.am	Ներկայացված են իշխանական, ընդդիմադիր և անկախ բանախոսների տարբեր դիրքորոշումներ: Բանավեճերում արտահայտվում են հակադիր կարծիքներ: Միաժամանակ, լրագրողական նյութերում արևմտյան ինտեգրումը հաճախ ներկայացվում է դրական, իսկ Ռուսաստանի քաղաքականությունը՝ քննադատական համատեքստում:
Factor.am	Հաղորդումներում ընդգրկված են ինչպես պաշտոնական քաղաքականությանն աջակցող, այնպես էլ այն քննադատող տեսակետներ: Մայիսին լրագրողների հարցադրումներում նկատվել է կառավարության արտաքին քաղաքականության հետ ավելի մեծ համընկնում, սակայն դա չի բնութագրում լրատվամիջոցի դիտարկման ամբողջ ժամանակահատվածի ուղղվածությունը:

Պայմանականորեն ընդդիմադիր ԶԼՄ-ներ	
24News.am	Ոչ միայն բանախոսները, այլ նաև հաղորդավարները հիմնականում քննադատական դիրքերից են ներկայացնում կառավարության արտաքին քաղաքականությունը: Պաշտոնական թեզերը հաճախ բարձրաձայնվում են դրանց հակադարձելու կամ կասկածի տակ դնելու նպատակով:
168.am	Լրագրողական ներկայացման և բանախոսների խոսույթում գերակշռում է կառավարության խաղաղության քաղաքականության, արևմտյան անվտանգության երաշխիքների և TRIPP-ի քննադատությունը, անգամ՝ մեղադրական երանգները:
5TV.am (5-րդ ալիք)	Լրագրողական ներկայացման և հրավիրված բանախոսների խոսույթում գերակշռում է կառավարության արևմտյան ուղղվածության, TRIPP-ի և Ռուսաստանի հետ հարաբերությունների վերաբերյալ քննադատությունը: Առանձին հարցերում արձանագրված են են նաև պաշտոնական քաղաքականության հետ համընկնումներ:

Բոլոր մշտադիտարկված լրատվամիջոցները

1 ապրիլի- 31 հուլիսի, 2026թ.

Հետազոտված նյութերում թեմային անդրադարձների ընդհանուր քանակը (միավոր)	**2352**

Թեմաներ		**Անդրա-դարձների քանակը (միավոր)**	**Անդրադարձների բնույթը (միավոր)**		
			+	**-**	**0**
1.	**ԱՄՆ ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
1.1.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ դերը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում*	300	145	70	85
1.2.	*Ինչպես է ներկայացվում «Թրամփի ուղի / TRIPP» նախագիծը:*	380	159	127	94
1.3.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	420	196	115	109
1.4.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունն Իրանի նկատմամբ*	494	34	256	204
1.5.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ*	81	10	38	33
1.6.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ*	15	5	4	6
1.7.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ*	59	9	18	32
1.8.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ*	196	8	85	103
1.9.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունը ԵՄ նկատմամբ*	102	17	39	46
1.10.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ ազդեցությունը ՀՀ ԱԺ ընտրությունների վրա*	180	36	73	71
2.	**ԵՄ ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
2.1.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ դերը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում*	221	107	75	39
2.2.	*Ինչպես է ներկայացվում EUMA առաքելությունը*	92	57	20	15
2.3.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	824	427	227	170
2.4.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ*	96	8	51	37
2.5.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ*	62	10	27	25
2.6.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունն ԱՄՆ նկատմամբ*	62	17	9	36
2.7.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ*	227	3	170	54
2.8.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ*	48	8	14	26
2.9.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ ազդեցությունը ՀՀ ԱԺ ընտրությունների վրա*	268	78	115	75
3.	**Ռուսաստանի ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
3.1.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի դերը Հայաստանի անվտանգության ապահովման գործում*	437	93	268	76

Թեմաներ		Անդրա-դարձների քանակը (միավոր)	Անդրադարձների բնույթը (միավոր)		
			+	-	0
3.2.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի ազդեցությունը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացի վրա*	269	49	150	70
3.3.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	1024	118	561	345
3.4.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ*	112	10	52	50
3.5.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ*	50	5	29	16
3.6.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ*	61	5	27	29
3.7.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունը ԵՄ նկատմամբ*	153	0	113	40
3.8.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունն ԱՄՆ նկատմամբ*	143	5	77	61
3.9.	*Ինչպես է ներկայացվում ՌԴ ազդեցությունը ՀՀ ԱԺ ընտրությունների վրա*	515	11	354	150
3.10.	*Ինչպես է գնահատվում Ռուսաստանի ազդեցությունը Հարավային Կովկասի անվտանգային միջավայրի վրա*	280	70	164	46
3.11.	*Ինչպես է գնահատվում Ռուսաստանի դերակատարությունը Հարավային Կովկասում տրանսպորտային կապերի վերաբացման հարցում*	194	50	84	60
4.	**Թուրքիայի ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
4.1.	*Ինչպես է ներկայացվում Թուրքիայի դերը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում*	285	26	193	66
4.2.	*Ինչպես է ներկայացվում Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	441	50	267	124
5.	**Իրանի ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
5.1.	*Ինչպես է ներկայացվում Իրանի դերը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում*	102	50	3	49
5.2.	*Ինչպես է ներկայացվում Իրանի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	298	157	4	137
6.	**Վրաստանի ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
6.1.	*Ինչպես է ներկայացվում Վրաստանի դերը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում*	36	10	2	24
6.2.	*Ինչպես է ներկայացվում Վրաստանի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	150	46	11	93

Ինչպես երևում է լրատվամիջոցների մշտադիտարկման ամփոփ աղյուսակից, Հայաստանի համար արդիական հարցերի լուսաբանման մեջ առավել մեծ ուշադրություն է հատկացվել Ռուսաստանի Դաշնության դերակատարությանը: Լուսաբանման ինտենսիվությամբ երկրորդ տեղում ԱՄՆ-ն է, իսկ երրորդում՝ Եվրոպական միությունը: ՌԴ-ի և ԵՄ-ի դեպքում ամենաշատ անդրադարձները վերաբերել են Հայաստանի նկատմամբ նրանց քաղաքականությանը, իսկ ԱՄՆ-ի դեպքում՝ Իրանի նկատմամբ վարած քաղաքականությանը:

Ընդ որում, մշտադիտարկման այս բաժնի համար սահմանված բոլոր 11 թեմաներով Ռուսաստանի դերակատարությունը շատ ավելի հաճախ բացասաբար

է գնահատվել, քան դրական: Մինչդեռ ԱՄՆ-ի և ԵՄ-ի վերաբերյալ բոլոր թեմաների համախառն հաշվարկով գերակշռել են դրական անդրադարձները: Սակայն դա չի նշանակում, որ այդ դերակատարների վերաբերյալ գնահատականների հարաբերակցությունը դրական է եղել նաև առանձին թեմաներով:

Մասնավորապես, 2026 թվականի մայիս-հուլիս ամիսներին ԱՄՆ-ի քաղաքականությունն Ադրբեջանի, Թուրքիայի, Իրանի, Ռուսաստանի և ԵՄ-ի նկատմամբ ավելի հաճախ արժանացել է բացասական, քան դրական գնահատականների: Վերոհիշյալ երկրների նկատմամբ ԵՄ-ի քաղաքականությունը նույնպես առավելապես քննադատաբար է գնահատվել: Միաժամանակ ԱՄՆ-ի նկատմամբ ԵՄ-ի քաղաքականությունն ավելի հաճախ դրական անդրադարձների է արժանացել: Բացի այդ, ավելի շատ քննադատական գնահատականների է արժանացել ՀՀ ԱԺ ընտրությունների վրա ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ ԵՄ-ի ազդեցությունը:

Մշտադիտարկման առարկա դարձած մյուս երկրների դերակատարություններին զգալիորեն ավելի քիչ ուշադրություն է հատկացվել: Ընդ որում, Իրանի և Վրաստանի վերաբերյալ դրական անդրադարձները բացասականներից շատ են եղել, իսկ Թուրքիայի դեպքում՝ ընդհակառակը:

Պայմանականորեն իշխանամետ լրատվամիջոցների և փորձագետների անդրադարձները

Թեմաներ		Անդրա-դարձների քանակը (միավոր)	Անդրադարձների բնույթը (միավոր)		
			+	-	0
1.	**ԱՄՆ ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
1.1.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ դերը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում*	232	153	30	49
1.2.	*Ինչպես է ներկայացվում «Թրամփի ուղի / TRIPP» նախագիծը:*	218	162	9	47
1.3.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	260	191	14	55
1.4.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունն Իրանի նկատմամբ*	212	31	82	99
1.5.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ*	47	11	20	16
1.6.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ*	9	6	0	3
1.7.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ*	22	3	1	18
1.8.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ*	90	6	26	58
1.9.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունը ԵՄ նկատմամբ*	65	17	22	26
1.10.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ ազդեցությունը ՀՀ ԱԺ ընտրությունների վրա*	80	24	10	46
2.	**ԵՄ ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
2.1.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ դերը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում*	120	100	2	18
2.2.	*Ինչպես է ներկայացվում EUMA առաքելությունը*	57	48	0	9
2.3.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	483	396	17	70
2.4.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ*	40	6	12	22
2.5.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ*	22	4	4	14
2.6.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունն ԱՄՆ նկատմամբ*	40	15	4	21
2.7.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ*	110	5	66	39
2.8.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ*	23	6	3	14
2.9.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ ազդեցությունը ՀՀ ԱԺ ընտրությունների վրա*	116	59	6	51
3.	**Ռուսաստանի ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
3.1.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի դերը Հայաստանի անվտանգության ապահովման գործում*	279	8	256	15
3.2.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի ազդեցությունը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացի վրա*	196	14	160	22
3.3.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	660	31	537	92

Թեմաներ		Անդրա-դարձների քանակը (միավոր)	Անդրադարձների բնույթը (միավոր)		
			+	-	0
3.4.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ*	82	7	52	23
3.5.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ*	25	1	20	4
3.6.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ*	37	4	21	12
3.7.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունը ԵՄ նկատմամբ*	97	0	81	16
3.8.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունն ԱՄՆ նկատմամբ*	90	4	58	28
3.9.	*Ինչպես է ներկայացվում ՌԴ ազդեցությունը ՀՀ ԱԺ ընտրությունների վրա*	431	4	383	44
3.10.	*Ինչպես է գնահատվում Ռուսաստանի ազդեցությունը Հարավային Կովկասի անվտանգային միջավայրի վրա*	166	4	148	14
3.11.	*Ինչպես է գնահատվում Ռուսաստանի դերակատարությունը Հարավային Կովկասում տրանսպորտային կապերի վերաբացման հարցում*	115	13	75	27
4.	**Թուրքիայի ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
4.1.	*Ինչպես է ներկայացվում Թուրքիայի դերը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում*	109	23	29	57
4.2.	*Ինչպես է ներկայացվում Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	160	45	39	76
5.	**Իրանի ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
5.1.	*Ինչպես է ներկայացվում Իրանի դերը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում*	38	16	2	20
5.2.	*Ինչպես է ներկայացվում Իրանի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	141	71	2	68
6.	**Վրաստանի ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
6.1.	*Ինչպես է ներկայացվում Վրաստանի դերը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում*	28	10	2	16
6.2.	*Ինչպես է ներկայացվում Վրաստանի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	84	37	3	44

Պայմանականորեն ընդդիմադիր լրատվամիջոցների և փորձագետների անդրադարձները

Թեմաներ		Անդրա-դարձների քանակը (միավոր)	Անդրադարձների բնույթը (միավոր)		
			+	-	0
1.	**ԱՄՆ ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
1.1.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ դերը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում*	83	16	39	28
1.2.	*Ինչպես է ներկայացվում «Թրամփի ուղի / TRIPP» նախագիծը:*	161	7	116	38
1.3.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	179	40	96	43
1.4.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունն Իրանի նկատմամբ*	225	2	142	81
1.5.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ*	42	3	23	16
1.6.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ*	7	0	6	1
1.7.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ*	42	3	19	20
1.8.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ*	101	1	56	44
1.9.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունը ԵՄ նկատմամբ*	35	2	14	19
1.10.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ ազդեցությունը ՀՀ ԱԺ ընտրությունների վրա*	74	2	55	17
2.	**ԵՄ ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
2.1.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ դերը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում*	102	10	70	22
2.2.	*Ինչպես է ներկայացվում EUMA առաքելությունը*	28	2	18	8
2.3.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	291	21	198	72
2.4.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ*	56	6	40	10
2.5.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ*	31	0	22	9
2.6.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունն ԱՄՆ նկատմամբ*	24	1	5	18
2.7.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ*	118	0	102	16
2.8.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ*	29	1	13	15
2.9.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ ազդեցությունը ՀՀ ԱԺ ընտրությունների վրա*	130	2	109	19

Թեմաներ		Անդրա-դարձների քանակը (միավոր)	Անդրադարձների բնույթը (միավոր)		
			+	-	0
3.	**Ռուսաստանի ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
3.1.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի դերը Հայաստանի անվտանգության ապահովման գործում*	163	71	40	52
3.2.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի ազդեցությունը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացի վրա*	96	32	26	38
3.3.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	393	71	86	236
3.4.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ*	37	2	14	21
3.5.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ*	24	3	5	16
3.6.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ*	21	1	5	15
3.7.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունը ԵՄ նկատմամբ*	51	0	28	23
3.8.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունն ԱՄՆ նկատմամբ*	49	1	20	28
3.9.	*Ինչպես է ներկայացվում ՌԴ ազդեցությունը ՀՀ ԱԺ ընտրությունների վրա*	130	6	28	96
3.10.	*Ինչպես է գնահատվում Ռուսաստանի ազդեցությունը Հարավային Կովկասի անվտանգային միջավայրի վրա*	104	62	18	24
3.11.	*Ինչպես է գնահատվում Ռուսաստանի դերակատարությունը Հարավային Կովկասում տրանսպորտային կապերի վերաբացման հարցում*	84	35	19	30
4.	**Թուրքիայի ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
4.1.	*Ինչպես է ներկայացվում Թուրքիայի դերը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում*	181	1	171	9
4.2.	*Ինչպես է ներկայացվում Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	252	1	220	31
5.	**Իրանի ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
5.1.	*Ինչպես է ներկայացվում Իրանի դերը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում*	61	36	3	22
5.2.	*Ինչպես է ներկայացվում Իրանի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	152	80	2	70
6.	**Վրաստանի ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
6.1.	*Ինչպես է ներկայացվում Վրաստանի դերը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում*	4	1	0	3
6.2.	*Ինչպես է ներկայացվում Վրաստանի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	56	12	3	41

Պայմանականորեն չեզոք լրատվամիջոցների և փորձագետների անդրադարձները

Թեմաներ		Անդրա-դարձների քանակը (միավոր)	Անդրադարձների բնույթը (միավոր)		
			+	-	+
1.	**ԱՄՆ ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
1.1.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ դերը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում*	96	60	4	32
1.2.	*Ինչպես է ներկայացվում «Թրամփի ուղի / TRIPP» նախագիծը:*	154	82	11	61
1.3.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	148	104	10	34
1.4.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունն Իրանի նկատմամբ*	144	3	54	87
1.5.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ*	28	4	2	22
1.6.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ*	7	0	1	6
1.7.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ*	15	4	1	10
1.8.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ*	42	1	9	32
1.9.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ քաղաքականությունը ԵՄ նկատմամբ*	25	5	10	10
1.10.	*Ինչպես է ներկայացվում ԱՄՆ ազդեցությունը ՀՀ ԱԺ ընտրությունների վրա*	53	21	10	22
2.	**ԵՄ ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
2.1.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ դերը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում*	78	46	9	23
2.2.	*Ինչպես է ներկայացվում EUMA առաքելությունը*	40	31	3	6
2.3.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	315	205	31	79
2.4.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ*	29	2	10	17
2.5.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ*	23	7	5	11
2.6.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունն ԱՄՆ նկատմամբ*	14	4	2	8
2.7.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ*	32	1	17	14
2.8.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ*	8	1	0	7
2.9.	*Ինչպես է ներկայացվում ԵՄ ազդեցությունը ՀՀ ԱԺ ընտրությունների վրա*	75	39	18	18

Թեմաներ		Անդրա-դարձների քանակը (միավոր)	Անդրադարձների բնույթը (միավոր)		
			+	-	+
3.	**Ռուսաստանի ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
3.1.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի դերը Հայաստանի անվտանգության ապահովման գործում*	203	14	174	15
3.2.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի ազդեցությունը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացի վրա*	160	3	136	21
3.3.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	436	17	349	70
3.4.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ*	58	4	34	20
3.5.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ*	30	1	22	7
3.6.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ*	28	0	19	9
3.7.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունը ԵՄ նկատմամբ*	43	0	36	7
3.8.	*Ինչպես է ներկայացվում Ռուսաստանի քաղաքականությունն ԱՄՆ նկատմամբ*	25	0	14	11
3.9.	*Ինչպես է ներկայացվում ՌԴ ազդեցությունը ՀՀ ԱԺ ընտրությունների վրա*	260	1	230	29
3.10.	*Ինչպես է գնահատվում Ռուսաստանի ազդեցությունը Հարավային Կովկասի անվտանգային միջավայրի վրա*	144	4	127	13
3.11.	*Ինչպես է գնահատվում Ռուսաստանի դերակատարությունը Հարավային Կովկասում տրանսպորտային կապերի վերաբացման հարցում*	106	3	89	14
4.	**Թուրքիայի ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
4.1.	*Ինչպես է ներկայացվում Թուրքիայի դերը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում*	78	4	45	29
4.2.	*Ինչպես է ներկայացվում Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	170	12	72	86
5.	**Իրանի ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
5.1.	*Ինչպես է ներկայացվում Իրանի դերը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում*	33	7	0	26
5.2.	*Ինչպես է ներկայացվում Իրանի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	105	52	4	49
6.	**Վրաստանի ընկալումը Հայաստանի հանրային կարծիքում**				
6.1.	*Ինչպես է ներկայացվում Վրաստանի դերը հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում*	13	1	0	12
6.2.	*Ինչպես է ներկայացվում Վրաստանի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ*	70	20	9	41

Վերևում ներկայացված երեք աղյուսակներում ներառված են ոչ միայն լրատվամիջոցների մշտադիտարկման տվյալները, այլև սոցիալական ցանցերում հասարակական կարծիքի առաջնորդների (ինֆլուենսերների) հրապարակումներում արտահայտված տեսակետները:

Ինչպես երևում է աղյուսակներից, ԱՄՆ-ի և ԵՄ-ի դերակատարության վերաբերյալ պայմանականորեն իշխանամետ և ընդդիմադիր խմբերում ընդգրկված լրատվամիջոցների ու ինֆլուենսերների գնահատականները տրամագծորեն հակառակ են: Առաջին դեպքում դրանք ընդգծված դրական են, իսկ երկրորդում՝ ընդգծված բացասական:

Էականորեն տարբերվում է նաև Հայաստանի տեղեկատվական դաշտի նշված հատվածների վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ: Իշխանամետ լրատվամիջոցներն ու ինֆլուենսերները Հայաստանի համար արդիական բոլոր հարցերում Մոսկվայի դերակատարությունը խիստ բացասական են գնահատում, մինչդեռ ընդդիմադիր հատվածում Ռուսաստանի վերաբերյալ դրական և բացասական անդրադարձների քանակները մոտավորապես հավասար են:

Ինչպես նշվել է վերևում, մշտադիտարկման առարկա դարձած մյուս երեք երկրների նկատմամբ զգալիորեն ավելի քիչ ուշադրություն է ցուցաբերվել: Ընդ որում, Թուրքիայի դերակատարության գնահատականներում, Ռուսաստանի համեմատ, իշխանամետ և ընդդիմադիր հատվածների դիրքերը փոխվում են: Իշխանամետ հատվածում դրական և բացասական անդրադարձների հարաբերակցությունը գրեթե հավասարակշռված է, մինչդեռ ընդդիմադիր հատվածում բացասական գնահատականները կտրուկ գերակշռում են:

Այս տվյալները ևս մեկ անգամ վկայում են հայ հասարակության քաղաքական ընկալումների սուր բևեռացվածության մասին: Միաժամանակ, երկու հակադիր բևեռների դիրքորոշումները որոշակիորեն համընկնում են Հայաստանի համար արդիական հարցերում Իրանի և Վրաստանի դերակատարության դրական գնահատականներում:

Ինչ վերաբերում է պայմանականորեն չեզոք հատվածին, ապա այստեղ արտահայտված տեսակետները Ռուսաստանի, ԱՄՆ-ի և ԵՄ-ի քաղաքականության վերաբերյալ զգալիորեն ավելի մոտ են իշխանամետ, իսկ Թուրքիայի դերակատարության վերաբերյալ՝ ընդդիմադիր հատվածի գնահատականներին:



www.ypc.am